

## ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ. ԱՆՑՅԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՆ

### Սարգիս Հարությունյան

ԱՄՆ-ը, համաձայն իր եվրասիական ռազմավարության, ձգտում է իրականացնել «Մեծ Մերձավոր Արևելք» նախագիծը, որի ներկայիս հիմնական ընդդիմադիրներից է հանդիսանում, շնորհիվ իր աշխարհայացքային և աշխարհաքաղաքական դիրքորոշման, Իրանի Իսլամական Հանրապետությունը: Իրանի շուրջ գործընթացներում առաջնային է Իրանի միջուկային ծրագիրը, որն օգտագործվում է որպես ճնշամիջոց նույն Իրանի նկատմամբ՝ զանգվածային ոչնչացման զենք ստեղծելու մեղադրանքներով: Մյուս կողմից՝ պաշտոնական թեհրանը զգալի աշխատանք է կատարել սեփական միջուկային ծրագրի իրականացման ուղղությամբ, որի տրամաբանությունը և առկա փաստերը վկայում են միջուկային զենքի ստեղծման նպատակի գոյության մասին:

Հողվածում ներկայացված է Իրանի միջուկային ծրագրի էվոլյուցիան՝ սկսած նախահեղափոխական ժամանակաշրջանից: Հողվածում դիտարկված է Իրանի միջուկային ծրագրի իրականացման գործում պաշտոնական թեհրանի քաղաքականությունը՝ տարածաշրջանային և գլոբալ գործընթացների լույսի ներքո:

### Ներածություն

Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) միջուկային ծրագրի հետ առնչվող ներկա զարգացումները անմիջականորեն կապված են ԱՄՆ-ի եվրասիական ռազմավարության հետ: Խնդիրն այն է, որ իրաքյան պատերազմից հետո Իրանը «Մեծ Մերձավոր Արևելք» (ՄՄԱ) ամերիկյան նախագծի<sup>1</sup> իրականացման հիմնական արգելքներից մեկն է համարվում: Հանդիսանալով «իսլամական վերածննդի» հենասյուններից՝ Իրանը, աշխարհայացքային առումով, «ՄՄԱ» նախագծի հանդեպ ընդունել է ընդդիմադիր կեցվածք: Ձուտ աշխարհաքաղաքական առումով՝ թեհրանն իր համար սպառնալիք է համարում ամերիկյան ազդեցության աճը տարածաշրջանում, և ձգտում է ամեն կերպ խոչընդոտել Վաշինգտոնի ակտիվությանը իսրայելա-պաղեստինյան հակամարտությունում, հետսադդամյան Իրաքում և Աֆղանստանում:

<sup>1</sup> «Մեծ Մերձավոր Արևելք» նախագծի նպատակն է եվրասիա մայրցամաքում ձևավորել ամերիկյան գերիշխանության տակ գտնվող մի ենթամայրցամաքային համակարգ, որը հենակետ կծառայի ԱՄՆ-ի եվրասիական ռազմավարության համար: **Մեծ Մերձավոր Արևելքը** բաղկացած է **Մերձավոր և Միջին Արևելքից** (Թուրքիա, Սիրիա, Լիբանան, Հորդանան, Իսրայել, Պաղեստին, Եգիպտոս, Սաուդյան Արաբիա, Եմեն, Օման, Արաբական Միացյալ Էմիրություններ, Կատար, Բահրեյն, Քուվեյթ, Իրաք, Իրան), **Հարավային Կովկասից** (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) և **Կենտրոնական Ասիայից** (Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Ուզբեկստան, Թուրքմենստան, Աֆղանստան):

Իր հերթին, ԱՄՆ-ի նպատակը Իրանում ներկա վարչակարգի փոփոխությունն է: Ենթադրվում է, որ Իրանի նոր վարչակարգը ամերիկյան քաղաքականության նկատմամբ պետք է լինի բարյացակամ, և, գուցե, ինչպես որ շահի օրոք էր, վերածվի ԱՄՆ-ի եվրասիական ռազմավարության հենասյուններից մեկի:

Իրանի շուրջ ներկա լարվածությունը գլխավորապես կապված է Իրանի միջուկային ծրագրի հետ: Լարվածության որակական աճ գրանցվեց, երբ Իրանի հասցեին հնչեցին զանգվածային ոչնչացման զենք (ՁՈՁ) ստեղծելու մեղադրանքներ: Լրատվական դաշտում առաջ մղվեց այն գաղափարը, ըստ որի՝ Իրանի՝ շուրջ 35 տարվա վաղեմության միջուկային ծրագրի վերջնական նպատակը միջուկային զենքի ստեղծումն է:

Իրանին ներկայացվող չորս խումբ մեղադրանքներից՝ ՁՈՁ-ի ստեղծում (գերազանցապես՝ միջուկային զենք), ահաբեկչությանը, սատարում մարդու և ազգային փոքրամասնությունների իրավունքների ոտնահարում, հետսահողամյան Իրաքում խոչընդոտների հարուցում, միայն առաջինը կարող է լուրջ հիմք հանդիսանալ Իրանի հետ կապված գործընթացների էական սրացման համար: Նշենք, որ ներկայումս ձևավորվող աշխարհակարգի «բարոյաիրավական համակարգը» թույլ է տալիս դիմել «վճռական գործողությունների» ընդդեմ «միջուկային օրինախախտումների»: Նման «վճռական գործողությունները», այս կամ այն չափով, ընկալելի են նաև միջազգային հանրության համար<sup>2</sup>:

Իրանի միջուկային ծրագիրը, ըստ էության, կարելի է բաժանել երկու մասի՝ մինչև 1979թ. Իսլամական հեղափոխությունը և հեղափոխությունից հետո:

## 1. Իրանի միջուկային ծրագիրը մինչև Իսլամական հեղափոխությունը

Իրանի միջուկային ծրագիրը սկիզբ է առել նախորդ դարի 60-ական թթ.: Խնդիրը ծագեց զուտ տնտեսական հաշվարկներից և երկրի էներգետիկ անվտանգությունից: 1970-ական թթ. սկզբին Իրանն ընդունեց սեփական էներգետիկ կարողությունների բազմազանեցման (դիվերսիֆիկացիա) մասին որոշումը: Իրանի նավթի ազգային պաշարների գնահատականից հետո (17 մլրդ. տոննա), հաշվարկվեց, որ եթե պահպանվի նավթի արդյունահանման տարեկան մակարդակը (200 մլն. տոննա),

<sup>2</sup> Կորեայի ժողովրդա-դեմոկրատական Հանրապետության (ԿԺԴ) հետ կապված զարգացումները, երբ 2003թ. հոկտեմբերի 2-ին պաշտոնապես հայտարարվեց, թե այդ երկրի տրամադրության տակ է գտնվում միջուկային վեց ռումբ, ավելի են արդիականացնում Իրանի շուրջ ընթացող զարգացումներում միջուկային գործոնի հարցը:

ապա Իրանը իր նավթի պաշարները կսպառի 2042թ.-ին: Առաջանում էր էներգետիկ անվտանգության ապահովման խնդիրը: Պատճառներից էր նաև արտահանվող նավթից ստացվող եկամուտների (պետական եկամուտների շուրջ 90%-ը) պահպանման ձգտումը, որպեսզի ներքին օգտագործման համար էներգիայի այլ աղբյուր կիրառվի (տվյալ դեպքում՝ միջուկային), իսկ նավթը արտահանվի: Բացի այդ, մեծ դեր խաղաց նավթի գների բարձրացումը (1971թ. հունվարին մեկ բարել (159 լիտր) նավթը արժեք \$ 1.8, իսկ 1974թ. հունվարին այն արդեն արժեք \$ 11.65), որով և էներգիայի այլ աղբյուրները ավելի գրավիչ դարձան:

Գուցե և այսօր տարօրինակ հնչի, սակայն Իրանի միջուկային ծրագրի հիմքում Ամերիկայի Միացյալ Նահանգներն են կանգնած: Դեռևս 1957թ.-ին, ամերիկյան «Խաղաղ ատոմ» ծրագրի<sup>3</sup> շրջանակներում Իրանի և ԱՄՆ-ի միջև կնքվեց համաձայնագիր միջուկային էներգիայի խաղաղ օգտագործման վերաբերյալ [1, c. 6]: 1967թ.-ին, ըստ այդ համաձայնագրի, ԱՄՆ-ն, ԱԷՄԳ-ի (Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն)<sup>4</sup> ֆինանսավորմամբ և տեխնիկական աջակցությամբ, Թեհրանում գտնվող «Միջուկային հետազոտությունների Ամիրաբադի կենտրոնին» (ներկայումս կոչվում է «Ամիրաբադի տեխնիկական քոլեջ») նատակարարեց 5 ՄՎտ հզորության միջուկային ռեակտոր և «տաք խուց» կոչվող սարքերը՝ պլուտոնիումի առանձնացման համար [2, p. 5]: Այդ ռեակտորը աշխատում է մինչ օրս: Չնայած այն հանգամանքին, որ կանոնավոր կերպով ենթարկվել է ԱԷՄԳ-ի փորձագետների ստուգայցերին, սակայն այդ ռեակտորի կողմից օգտագործվող 93%-ոց հարստացված ուրանը բավարար է միջուկային զենքի որոշ տեսակների ստեղծման համար [3, p. 4]:

Իրանի միջուկային ծրագիրը նոր թափ ստացավ 1970-ական թվականների կեսերից: Միջուկային ծրագրի համակարգման համար 1974թ. Իրանի շահ Սոհամենդ Ռեզա Փեհլևիի հրամանով ստեղծվեց Իրանի ատոմային էներգիայի կազմակերպությունը (ԻԱԷԿ), որի ղեկավարը անմիջականորեն ենթարկվում էր շահին (հետագայում՝ ԻԻՅ-ի նախագահին):

ԻԱԷԿ-ի հիմնական գործառնություններին էին.

<sup>3</sup> 1953թ. դեկտեմբերին Ամերիկայի Միացյալ Նահանգները ԱՄԿ-ի Գլխավոր ասամբլեային ներկայացրեց իր «Խաղաղ ատոմ» ծրագիրը, որով նախատեսվում էր ամերիկյան օգնություն ցուցաբերել այլ երկրների խաղաղ միջուկային էներգետիկայի զարգացման համար. օգնությունը իրականացվելու էր միջուկային տեխնոլոգիաների, սարքավորումների մատակարարման, ինչպես նաև մասնագետների պատրաստման տեսքով: Այդ ամենի փոխարեն Վաշինգտոնը իրականացնելու էր այդ ծրագրերի վերահսկողությունը:

<sup>4</sup> ԱԷՄԳ - IAEA (International Atomic Energy Agency):

- Իրանի էներգետիկ կարիքները բավարարելու համար միջուկային էներգիայի օգտագործումը,
- միջուկային ռեակտորների ինքնուրույն կառուցման համար անհրաժեշտ տեխնոլոգիաների և սարքավորումների ձեռքբերումը,
- միջուկային փակ ցիկլի ստեղծման համար անհրաժեշտ տեխնոլոգիաների ձեռքբերումը,
- արդյունաբերական, գյուղատնտեսական և բժշկական նպատակներով միջուկային տեխնոլոգիաների կիրառումը,
- մարդկանց և շրջակա միջավայրի պաշտպանությունը շողարձակման (ռադիացիա) տարածումից [1, c. 5]:

Այդ ծրագրի նպատակն էր որչ Երկրով մեկ կառուցել 23 ռեակտորներից կազմված, ավելի քան 20 000 ՄՎտ գումարային հզորությամբ մի էներգահամակարգ, որը շահագործման պետք է պատրաստ լիներ 1994թ.-ին<sup>5</sup>: Ամնիջապես սկսվեցին բանակցությունները ԱՄՆ-ի, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության (այսուհետև՝ ԳՖՀ) և Ֆրանսիայի հետ՝ վերոհիշյալ ծրագիրը իրականացնելու համար: 1974թ.-ին ԱՄՆ-ի և Իրանի միջև կնքվեց միջուկային վառելիքի մատակարարման տասնամյա պայմանագիր: Նույն թվականին, ԻԱԷԿ-ի և արևմտագերմանական «Կրաֆտվերք Յունիոն» (*Kraftwerk Union, KWU*) ընկերության միջև կնքվեց հատուկ մի պայմանագիր Պարսից ծոցի ափին գտնվող Բուշեր քաղաքի մոտ (քաղաքից մոտ 20 կմ. հարավ-արևմուտք, Թեհրանից մոտ 1 200 կմ. հարավ) PWR (Pressured Water Reactor-«Սեղմված ջրի ռեակտոր») տիպի, յուրաքանչյուրը 1 300 ՄՎտ հզորությամբ<sup>6</sup> երկու ռեակտորների կառուցման մասին<sup>7</sup>: 1977թ. մարտին, ԻԱԷԿ-ի ու ԳՖՀ-ի Տեխնոլոգիաների և հետազոտությունների նախարարության միջև կնքվեց հատուկ մի համաձայնագիր, ըստ որի՝ կողմերը պետք է համագործակցեին ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում՝ միջուկային օբյեկտների համատեղ կառուցում և շահագործում, իրանցի մասնագետների պատրաստում ԳՖՀ-ում: Նույն ԻԱԷԿ-ը բանակցություններ էր վարում գերմանական *KWU* և «Բրաուն Բովերի» (*Brown Boverie*) ընկերությունների հետ՝ միջուկային լրացուցիչ ռեակտորների կառուցման համար [6]:

<sup>5</sup> Ծրագրի իրականացման համար այն ժամանակ նախատեսվում էր ծախսել մոտ \$ 30 մլրդ.: Բուշերում առաջին երկու էներգաբլոկները նախատեսվում էր ավարտին հասցնել 1980թ. և 1981թ., Վիվազում՝ 1983թ. վերջին և 1984թ. [4, p. 177], [5, c. 6]:

<sup>6</sup> Արտադրանքը՝ գերմանական «Սիմենս» (*Siemens*) ընկերության:

<sup>7</sup> Համաձայն որոշ հրապարակումների՝ Բուշերի ԱԷԿ-ի կառուցումը գերմանացիները սկսեցին 1976թ.-ին:

1976թ. մարտի սկզբին Ֆրանսիայի նախագահ Վալերի ժիսկար դ'Էստենի Թեհրան կատարած այցի ընթացքում կողմերը ստորագրեցին «Արդյունաբերական և տնտեսական բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը, որի շրջանակներում նախատեսվում էր Իրանի տարածքում ատոմական էլեկտրակայան (ԱԷԿ) կառուցել: Այդ կապակցությամբ ԻԱԷԿ-ի և ֆրանսիական «**Ֆրամատոմ**» (**Framatom**) ընկերության միջև հետագայում շարունակված բանակցությունների ընթացքում կնքվեց երկու գործարք՝ Ղորուն գետի ափին, Ահվազ բնակավայրի մոտ կառուցել PWR տիպի երկու ռեակտոր՝ յուրաքանչյուրը 950 ՄՎտ հզորությամբ և յուրաքանչյուրը մոտ \$ 2 մլրդ. արժողությամբ [1, շ. 5-6]: Քանի որ Իրանի միջուկային ծրագիրը ենթադրում էր միջուկային ավարտուն ցիկլի ստեղծում, ապա Փարիզի հետ տարվում էին նաև բանակցություններ Ֆրանսիայում ուրանի հարստացման և օգտագործված միջուկային վառելիքի վերամշակման համար նախատեսված գործարանների ձեռքբերման նպատակով: 1974թ.-ին (որոշ տվյալներով՝ 1975թ.-ին), ԻԱԷԿ-ը «Յուրոդիֆ» (**Eurodif**) միջազգային կոնսորցիումից (որի համատերերն էին համարվում ֆրանսիական «Ֆրամատոմ» (**Framatom**), իտալական «Էնեա» (**Enea**), իսպանական «Էնուսա» (**ENUSA [National Uranium Enterprises]**) և բելգիական «Սինատոմ» (**Synatom**) ընկերությունները), \$ 1 մլրդ.-ով ձեռք բերեց Ֆրանսիայի Տրիկաստան բնակավայրի մոտ կառուցվող ուրանի հարստացման գործարանի բաժնետոմսերի 10%-ը: Ընդ որում, Իրանն իրավունք ստացավ գնել այդ գործարանի արտադրանքը, ինչպես նաև ծանոթանալ ուրանի հարստացման տեխնոլոգիային [1, շ. 6]: Այդ ամենից զատ, 1970-ական թթ. կեսերին Իրանը բավականին մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում ԱՄՆ-ից միջուկային 8 ռեակտորների գնման հարցում (գործարքը գնահատվում էր \$ 6.8 մլրդ.) [2, շ. 5]:

Ի հավելումն այդ ամենի, Իրանը նաև իր տարածքում ուրանի հանքավայրերի որոնում էր իրականացնում (այդ բնագավառում Թեհրանը հատկապես հաջողության հասավ Յազդ նահանգի Շագանդ շրջանում) և իր մասնագետներին էր պատրաստում. նրանք ուսման նպատակով գործուղվեցին ԱՄՆ, ԳՖՅ, Մեծ Բրիտանիա, Բելգիա, Իտալիա, Ֆրանսիա, Շվեյցարիա և Յնդկաստան [3, թթ. 4-5], [1, շ. 5]:

Չնայած այն բանին, որ 1973թ. հունիսի 19-ին Իրանը կնքեց «Միջուկային զենքերի չտարածման մասին պայմանագիրը» (ուժի մեջ մտավ 1974թ. մայիսի 15-ին), սակայն մի շարք փորձագետներ (առաջին հերթին՝ ամերիկացի) տեսակետ են հայտնում, թե Իրանն արդեն իսկ շահի օրոք սկսել էր փոքր հզորության միջուկային զենքերի ստեղծման աշխատանքները՝ գլխավորապես «Միջուկային հետազոտությունների

Ամիրաբադի կենտրոնում»։ Այդ հետազոտությունները ներառում են զենքերի նախագծումը, ինչպես նաև օգտագործված միջուկային վառելիքից պլուտոնիումի վերականգնումը (վերամշակում)։ Ըստ որոշ տեղեկությունների, միևնույն ժամանակ՝ 1970-ական թթ. կեսերից մինչև Իսլամական հեղափոխությունը, Իրանը հարստացված ուրանի հետ կապված գաղտնի հետազոտական աշխատանքներ է սկսում, ինչպես նաև ստեղծում է հատուկ խումբ՝ փոքր հզորության միջուկային զենքերի ստեղծման նպատակով [3, p. 4]։ 1976թ.-ին Իրանը \$ 700 մլն. գաղտնի պայմանագիր է կնքում Յարավաֆրիկյան Յանրապետության (ՅԱՅ) հետ՝ տարեկան 1 տոննա “yellow cake” կոչվող հանքանյութի գնման վերաբերյալ։ Պարզ չէ, թե ՅԱՅ-ը ինչքա՞ն հանքանյութ է մատակարարել Իրանին, մինչև որ 1984թ. աֆրիկյան այդ հանրապետությունը ընդունեց ԱԵՄԳ-ի կողմից հաստատված սահմանափակումները Իրանի հետ համագործակցության առումով, կամ արդյոք հարգե՞լ էր ՅԱՅ-ը այդ սահմանափակումները։ Ըստ որոշ տեղեկությունների, 1988-1989թթ. ՅԱՅ-ը Իրանին մատակարարել է “yellow cake” կոչվող հանքանյութի որոշ խմբաքանակ<sup>8</sup>։ Եվ վերջապես, 1970-ական թթ. վերջին, Իրանի կառավարությունը ԱՄՆ-ին դիմեց 26.2 կգ. հարստացված ուրան գնելու խնդրանքով, որը չբավարարվեց. թերևս իր դերն ունեցավ Իսլամական հեղափոխությունը [3, p. 5]։

Ընդհանուր առմամբ, մինչև Իսլամական հեղափոխությունը (1979թ. հունվարի վերջ-փետրվարի սկիզբը, մինչև շահի տապալումը), Իրանն արդեն իսկ կնքել էր 6 ռեակտորի կառուցման պայմանագրեր, և փորձում էր իր միջուկային ծրագրի համար գնել 12 միավոր սարքավորումներ ԳՖՅ-ից, Ֆրանսիայից և ԱՄՆ-ից<sup>9</sup>։ Բուշերում արևմտագերմանացիների կողմից կառուցվող 1300 ՄՎտ-ոց ռեակտորները<sup>10</sup>, ըստ տարբեր աղբյուրների, պատրաստ էին միջինը 60 և 75%-ներով, իսկ Ահվազ բնակավայրի մոտ (առկա է նաև «Դարդուհինի մոտ» տեղեկությունը) սկսվել էին ֆրանսիացիների կողմից կառուցվելիք երկու 950 ՄՎտ-ոց ռեակտորներից (Ահվազի ԱԷԿ) մեկի տեղի նախապատրաստական աշխատանքները [3, p. 5]։

<sup>8</sup> “yellow cake”-ը ԱԵՄԳ-ի ստուգումների առարկա չէ։

<sup>9</sup> Բավականին լայն տարածում ունի այն տեսակետը, թե 1979թ. Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխության հիմնական պատճառը Իրանի զարգացման բարձր տեմպերն էին։ Այլ կերպ ասած՝ հեղափոխությունը, որը, որոշ վարկածներով, կազմակերպվեց դրսից, նպատակ ուներ կանխելու Իրանի զարգացման տեմպերը կամ որոշ ժամանակով ընդհանրապես դադարեցնելու նրա զարգացումը։ Խոսքը վերաբերում է նաև միջուկային ոլորտին (գուցե, առաջին հերթին, հենց միջուկային ոլորտին)։ Ջարգացման բարձր տեմպեր ունեցող Իրանը, հզորանալով, լուրջ արգելք կարող էր լինել «ուժի կենտրոնների» մերձավորարևելյան քաղաքականության համար։

<sup>10</sup> Մինչև Իսլամական հեղափոխությունը, Իրանի շահական կառավարությունը Բուշերի ԱԷԿ-ի կառուցման վրա արդեն 5.3 մլրդ. արևմտագերմանական մարկ էր ծախսել [7]։

**Աղյուսակ 1. Իրանի միջուկային ենթակառուցվածքը իսլամական հեղափոխության նախօրեին.**

օբյեկտ	օբյեկտի սարքավորման տեսակը	արտահանող	սարքավորման վիճակը
Բուշերի ԱԷԿ	երկու PWR-1 300 ռեակտոր	ԳՖՅ	առաջին բլոկը ավարտված է 70-90%-ով, երկրորդը՝ 40-75%-ով
Ահվազի ԱԷԿ	երկու PWR-950 ռեակտոր	Ֆրանսիա	ավարտված է ԱԷԿ-ի կառուցման համար նախատեսված շինհրապարակի նախապատրաստումը
«Միջուկային հետազոտությունների Ամիրաբադի կենտրոն» (Թեհրան)	հետազոտական ռեակտոր 5 ՄՎտ հզորությամբ	ԱՄՆ	շահագործվում է
	«տաք խցեր»	ԱՄՆ	անհայտ է
Տրիկաստանում (Ֆրանսիա) գտնվող ուրանի հարստացման գործարան. համատերերից է նաև Իրանը	հարստացնող սարքավորումներ (գազադիֆուզիոն մեթոդի հիման վրա)	-	շահագործվում է

**2. Իրանի միջուկային ծրագիրը իսլամական հեղափոխությունից հետո**

Իսլամական հեղափոխությունը լուրջ հարված էր Իրանի միջուկային ծրագրի համար: Ծրագրի իրականացումը կասեցվեց, իսկ Իրանն այդ բնագավառում ավելի քան տասը տարի հետ ընկավ:

1979թ. մարտին Իրանը մերժեց արևմտագերմանական **KWU** ընկերության առաջարկը՝ սառեցնելու Բուշերի ԱԷԿ-ի շինարարությունը՝ այն լիովին դադարեցնելու փոխարեն: Նույն թվականի օգոստոսին **KWU**-ն դադարեցրեց իր աշխատանքները Բուշերում<sup>11</sup>, իսկ երկու ամիս անց՝ նոյեմբերին, ԻԻՅ կառավարությունը չեղյալ հայտարարեց **KWU**-ի հետ կնքված բոլոր պայմանագրերը: Այստեղ նշենք, որ այաթոլլա Խոմեյնին անբարոյական էր համարում միջուկային զենքը, և այդ հանգամանքը նույնպես ազդեց Իրանի միջուկային ծրագրի կասեցման վրա: Համաձայն մի զեկույցի, այդ ժամանակ Իրանի «միջուկային կադրերը» կրճատվեցին՝ հասնելով 13 հոգու [3, p. 5]:

Իրավիճակը փոխվեց Իրան-Իրաքյան պատերազմի ժամանակ (1980-1988թթ.): Իրաքյան ռազմական տեխնիկայի առավելությունը իրանականի նկատմամբ՝ ստիպեց պաշտոնական Թեհրանին վերանայելու միջուկային

<sup>11</sup> Մինչև Իսլամական հեղափոխությունը, ո՛չ ռեակտորները, և ո՛չ էլ տուրբինների համար գոլորշի արտադրող գեներատորները չէին գործարկվել:

կային ծրագրի նկատմամբ իր ունեցած վերաբերմունքը: 1980-ական թթ. առաջին կեսից այդ բնագավառում կրկին սկսվեց շարժ նկատվել: Նախ՝ Իրանի կառավարությունը «Միջուկային հետազոտությունների Ամիրաբադի կենտրոնին» հատկացրեց նոր, ավելի մեծ ֆինանսական միջոցներ՝ միջուկային ոլորտում հետազոտությունները շարունակելու համար<sup>12</sup>: 1984թ.-ին, Թեհրանը, Փարիզի օժանդակությամբ, «Ամիրաբադի կենտրոնի» հետազոտական անձնակազմը և սարքավորումները Սպահան քաղաքից 4 կմ. հեռավորությամբ գտնվող (Շահրիդա և Ֆուլաշանս գյուղերի միջև) միջուկային հետազոտությունների նոր կենտրոն տեղափոխեց<sup>13</sup>: Այդ նոր կենտրոնի համար հետազոտական նոր ռեակտոր ձեռք բերելու հարցում Իրանը հայցեց Ֆրանսիայի և Պակիստանի<sup>14</sup> օգնությունը, սակայն՝ ապարդյուն:

Ըստ որոշ տեղեկությունների, մոտավորապես նույն այդ ժամանակ Իրանը Ալժիրի միջոցով Արգենտինայից թերևս ավելի քան երկու տոննա ուրանի երկօքսիդ է գնել [9]<sup>15</sup>: 1987թ. մայիսին Արգենտինան համաձայնվեց Իրանին վաճառել \$5.5 մլն.ի ուրան «Միջուկային հետազոտությունների Ամիրաբադի կենտրոնի» ռեակտորի համար, ինչպես նաև ուսուցանել իրանցի մասնագետներին իր «Խոսե Բալասեյրո» (*Jose Balaseiro*) միջուկային ինստիտուտում: 1987թ. վերջին և 1988թ. սկզբին Արգենտինայի միջուկային ծրագրի մասնագետների Իրան կատարած այցի ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց, ըստ որի՝ Բուենոս-Այրեսը «Միջուկային հետազոտությունների Ամիրաբադի կենտրոնի» ռեակտորի կառավարման համար անհրաժեշտ տեխնոլոգիաներ (20% հարստացված ուրանով, որպես փոխարինող դեռևս 1970-ական թթ. ԱՄՆ-ի կողմից մատակարարված, բայց արդեն իրեն սպառած 93% հարստացված ուրանով տեխնոլոգիաներին), ինչպես նաև ուրանի հարստացման ու պլուտոնիումի վերամշակման տեխնոլոգիաներ պետք է վաճառի Թեհրանին: Սակայն Արգենտինայում իշխանափոխությունը կանխեց այդ գործարքը: 1992թ. փետրվարին պաշտոնական Բուենոս-Այրեսը հայտարարեց, թե չեղյալ է համարում Իրանի հետ կնքված \$18 մլն. պայմանա-

<sup>12</sup> ԱԵՄԳ-ն միշտ էլ ստուգայցերի է ենթարկել այդ կենտրոնը:

<sup>13</sup> Սպահանի կենտրոնի մասին պաշտոնական Թեհրանը ԱԵՄԳ-ին չէր տեղեկացրել մինչև 1992թ. փետրվարը, երբ այդ կազմակերպության փորձագետները ստուգայցեր կատարեցին Իրանի միջուկային ծրագրի շրջանակում ընդգրկված 6 օբյեկտների՝ միջուկային զենք ստեղծելու Թեհրանի ջանքերը ստուգելու համար: Այդ կենտրոնի կառուցումն ավարտվեց 1984թ.-ին. այն կառուցել է Ֆրանսիան, որոշ տեղեկությունների համաձայն՝ նաև Չինաստանը:

<sup>14</sup> 1987թ.-ին, Պակիստանը միջուկային համագործակցության մասին համաձայնագիր կնքեց Իրանի հետ: ԻԱԵԿ-ի մասնագետները մեկնեցին Պակիստան՝ մասնակցելու միջուկային ոլորտում վերապատրաստման, ուսուցողական ծրագրերին: Պակիստանի միջուկային զենքի ստեղծման բազմաթիվ ծրագրեր ղեկավարած դոկտոր Աբդուլ Քադիր Խանը 1986թ. փետրվարին և 1987թ. հունվարին Թեհրան և Բուշերի ԱԵԿ այցելեց [8]:

<sup>15</sup> Մասնագետների հավաստմամբ, ուրանի երկօքսիդը ավելի կատարյալ նյութ է, քան "yellow cake"-ը, և ուրանի երկօքսիդից ավելի հեշտ է պլուտոնիում ստանալ:



գիրը (միջուկային տեխնոլոգիաների մատակարարման գծով): Ըստ արգենտինյան զանգվածային լրատվամիջոցների՝ Արգենտինայի կառավարությունն այդ քայլը կատարել էր Ամերիկայի Միացյալ Նահանգների ճնշման տակ [3, p. 7]:

1985թ.-ին Իրանը Չինաստանից ստացավ հետազոտական ռեակտոր<sup>16</sup>, իսկ 1987թ.-ին՝ «Կալուտրոն» (Calutron - էլեկտրամագնիսական իզոտոպային բաժանիչ) կոչվող սարք՝ ուրանի հարստացման հետազոտությունների համար<sup>17</sup>:

1984 թ.-ին Իրանը Բուշերի ԱԷԿ-ը վերականգնելու վերջնական որոշում կայացրեց: Սկզբնական շրջանում նախատեսվում էր, որ Բուշերի ԱԷԿ-ը պետք է վերականգնի ԳՖՅ-ի, Արգենտինայի և Իսպանիայի համապատասխան ընկերություններից կազմված միջազգային կոնսորցիումը: 1987թ.-ին, ԱԷԿ-ի վիճակը գնահատելու համար Բուշեր ժամանեցին գերմանացի մի քանի մասնագետներ: Սակայն, այն բանից հետո, երբ իրաքյան օդուժը ռմբակոծեց Բուշերի ԱԷԿ-ը<sup>18</sup> (որի ժամանակ զոհվեց գերմանացի մեկ մասնագետ, իսկ մի քանիսը վիրավորվեցին), կոնսորցիումի համագործակցությունն Իրանի հետ ավարտվեց [10, April 1988]: Յետագայում Թեհրանը ևս մի քանի անգամ փորձեց Բուշերի վերականգնման աշխատանքներին ներգրավել գերմանացի մասնագետներին, սակայն՝ ապարդյուն:

1990-ական թթ. սկզբին իրանական իշխանությունները բանակցությունների մեջ մտան Բրազիլիայի հետ՝ զնելու համար վերջինիս տարածքում գտնվող արևմտագերմանական կիսակառույց PWR (“Angra-III”) ռեակտորը, որը նման էր Բուշերի ռեակտորին: Թեհրանը նաև մտադիր էր զնել Լեհաստանի ժարնովիցե քաղաքի մոտ գտնվող ԱԷԿ-ի (խորհրդային արտադրության ռեակտոր՝ ВВЭР-440) սարքավորումները (ժարնովիցեի ԱԷԿ-ի շինարարությունը կանգնեցվել էր 1990թ.-ին՝ Չերնոբիլի ԱԷԿ-ի աղետի կապակցությամբ, սակայն, մինչ այդ, խորհրդային

<sup>16</sup> 1985թ. սկզբին, երբ Իրաքի բանակը իրանական զինված ուժերի դեմ առաջին անգամ լայնորեն օգտագործեց քիմիական զենք, Իրանի իշխող վերնախավը արմատապես վերանայելով սեփական միջուկային ծրագրի նկատմամբ իր ունեցած վերաբերմունքը, վերապատրաստման համար Չինաստան գործուղեց իր միջուկային ծրագրի մասնագետներին:

<sup>17</sup> Իրանական «Կալուտրոն»-ը ընդամենը մեկ միլիամպերանոց էր և նախատեսված էր միայն հետազոտական ծրագրերի համար, իսկ, օրինակ, Իրաքը նույն այդ ժամանակ իր միջուկային ծրագրերում օգտագործում էր 600 միլիամպերանոց «Կալուտրոն»-ներ [3, pp. 5-6]: 1991թ. նոյեմբերի 4-ին պաշտոնական Պեկինը հայտարարեց, թե 1989թ.-ին և 1991թ.-ին առևտրային համագործակցության համաձայնագրեր է կնքել Իրանի հետ, ըստ որոնց՝ Իրան պետք է առաքվեն «Կալուտրոն» կոչվող սարքը և փոքր միջուկային ռեակտոր՝ «խաղաղ և առևտրական նպատակների համար» [3, p. 8]:

<sup>18</sup> Իրաքի օդուժը Բուշերի ԱԷԿ-ը ռմբակոծել է 7 անգամ՝ 1984թ. մարտի 24-ին, 1985թ. փետրվարի 12-ին, 1985թ. մարտի 4-ին, 1986թ. հուլիսի 12-ին, 1987թ. նոյեմբերի 17-ին, 1987թ. նոյեմբերի 19-ին և 1988թ. հուլիսի 19-ին:

մասնագետները գրեթե լիովին ավարտել էին առաջին էներգաբլոկի շինարարությունը: Գրեթե նույն ժամանակ, ԱՄՆ կառավարությունը դիմեց արդեն միավորված Գերմանիայի կառավարությանը՝ կանխելու համար Արևելյան Գերմանիայի տարածքում (Գրեյսֆալդ բնակավայրի մոտ) կառուցված «Նորդ» ԱԷԿ-ի (խորհրդային արտադրության ռեակտոր՝ BBՅՔ-440) սարքավորումների վաճառքը Իրանին<sup>19</sup>: ԱՄՆ կառավարությունը խնդրանքով դիմեց Չեխիայի կառավարությանը՝ կանխելու համար «Շկոդա» (*Skoda*) ընկերության կողմից Բուլշերի ԱԷԿ-ի համար անհրաժեշտ սարքավորումների վաճառքը Իրանին [1, c. 8]: 1990թ. փետրվարին, իսպանական զանգվածային լրատվամիջոցները հաղորդեցին, թե իսպանական «Ասոցիեյթեդ էնտերպրայզես» (*Associated Enterprises*) ընկերությունը բանակցություններ է վարում ԻԱԷԿ-ի հետ՝ ավարտելու համար Բուլշերի կիսակառույց ԱԷԿ-ը, իսկ իսպանական մեկ այլ ընկերություն՝ «էնուսա»-ն պետք է միջուկային վառելիք մատակարարի Բուլշերի ԱԷԿ-ին. ծրագրում պետք է ներգրավվեր նաև գերմանական մեզ հայտնի *KWU* ընկերությունը: Ավելի ուշ, Իրանի Արդյունաբերության նախարարության տասը հոգիանոց պատվիրակությունը ժամանեց Մադրիդ՝ բանակցելու «Ասոցիեյթեդ էնտերպրայզես» ընկերության նախագահ Ադոլֆո Գարսիա Ռոդրիգեզի հետ [10, March 1990, p. 3]:

Այս ամենով հանդերձ, Իրանը շարունակում էր գիտական փորձերը իր միջուկային ծրագրի շրջանակներում: Մասնավորապես, այդ տարիներին Թեհրանի Տեխնոլոգիաների Շարիֆ համալսարանում անցկացվում էին գիտահետազոտական աշխատանքներ՝ կապված ուրանի հարստացման և ցենտրիֆուգային (ուրանը հարստացնող սարք) տեխնոլոգիաների հետ: 1991թ.-ին Իրանը փորձ արեց Գերմանիայի Թիսսեն քաղաքից ներմուծել հատուկ մագնիսներ, որոնք օգտագործվելու էին ցենտրիֆուգաների համար [3, p. 8], սակայն՝ ապարդյուն:

### 3. Համագործակցությունը Չինաստանի հետ

Չին-իրանական համագործակցությունը միջուկային ոլորտում սկսեց կտրուկ ակտիվանալ 1990-ական թթ. սկզբից: 1991թ. հունվարի 21-ին ԻԱԷԿ-ը Չինաստանի Ազգային պաշտպանության, գիտության, տեխնոլոգիաների և արդյունաբերության կոմիտեի հետ կնքեց համաձայնագիր, ըստ որի՝ չինական կողմը Սպահանի միջուկային հետազոտությունների կենտրոնում 27 կվտ հզորությամբ հետազոտական ռեակտոր պետք է կառուցեր: Ամենայն հավանականությամբ, այդ ռեակտորը լիցքավորվելու էր պլուտոնիումով: 1994թ.-ին այդ ռեակտորը շահագործման հանձնվեց [11]:

<sup>19</sup> Իրանը նաև փորձել է ներմուծել միջուկային սարքավորումներ ու տեխնոլոգիաներ արևմտագերմանական «Սիմենս» ընկերությունից:

1992թ. սեպտեմբերի 10-ին Իրանի նախագահ Ռաֆսանջանիի Չինաստան կատարած այցի ժամանակ ստորագրվեց միջուկային ուղորտում չին-իրանական համագործակցության մասին արձանագրությունը: Ըստ այդ համաձայնության, պայմանավորվածություն ձեռք բերվեց Իրանին վաճառել 300-330 ՄՎտ հզորության երկու ռեակտորներից մեկը<sup>20</sup>: 1994թ. հուլիսի 4-ին Իրանը և Չինաստանը հայտարարեցին, թե ստորագրվել է համաձայնագիր Թեհրանի մոտ 300 ՄՎտ ռեակտորի կառուցման մասին: Դրանից հետո իրանական իշխանությունները բավականին մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին 300 ՄՎտ (PWR) չինական ռեակտորների<sup>21</sup> գնման հարցում: Ավելի ուշ, զարգացումները հանգեցին պայմանավորվածության, ըստ որի՝ Պեկինը Բուշերի մոտ 300-330 ՄՎտ հզորությամբ երկու ռեակտոր պետք է կառուցի<sup>22</sup>: Համաձայն ամերիկյան աղբյուրների, այդ ռեակտորներից առնվազն մեկը տեղադրվել է Բուշերի մոտակայքում գտնվող Էսթելլալ բնակավայրի մոտ՝ Պարսից ծոցի ափին [3, p. 9]:

1995թ. մայիսի կեսերին Իրանը հայտարարեց, թե Չինաստանի հետ իր պայմանավորվածությունների վրա ինքը արդեն ծախսել է \$800-900 մլն.: 1995թ. սեպտեմբերին հայտնված տեղեկության համաձայն, Չինաստանը օգնել է Իրանին զարգացնելու Թեհրանից 160 կմ. հյուսիս-արևելք գտնվող բնակավայրի մոտ տեղակայված «Կալուտրոն» կոչվող սարքավորումները: 1996թ. ապրիլին հաղորդագրություն տարածվեց, թե Պեկինը օգնում է Թեհրանին Սպահանի կենտրոնում գտնվող գազադիֆուզիոն սարքավորումների արդիականացման հարցում [15]:

Չին-իրանական միջուկային համագործակցության վրա մասնավորապես մեծ ուշադրություն էր դարձվում Բիլ Բլինթոնի վարչակազմում. 1992-2000թթ. ընթացքում չին-ամերիկյան բարձր մակարդակի գրեթե ամեն հանդիպման ժամանակ Վաշինգտոնը բարձրացնում էր Իրանի հետ Պեկինի միջուկային համագործակցության հարցը<sup>23</sup>: Ի վերջո, Ամե-

<sup>20</sup> Ըստ այդ համաձայնության, Չինաստանը 1992թ.-ին Սպահանի միջուկային հետազոտությունների կենտրոնի համար միջուկային տարբեր տեխնոլոգիաներ մատակարարեց գիտահետազոտական աշխատանքների համար, որոնք, սակայն, շրջայական փակ ռեակցիա իրականացնելու հնարավորություն չէին ընձեռնում (սահմանափակ հզորության և հնարավորությունների պատճառով): 1994թ.-ին մատակարարվեց նաև նեյտրոնների 27 կՎտ հզորության «փոքրիկ աղբյուր», ինչպես նաև «ծանր ջրով» աշխատող զրոյական հզորության հետազոտական ռեակտոր, որը կարող էր տարեկան արտադրել առավելագույնը 100 գրամ պլուտոնիում և որը չէր կարող արդիականացվել ավելի շատ պլուտոնիում արտադրելու համար [1, c. 8]:

<sup>21</sup> Իրենց տեսակով, այդ ռեակտորները նման էին Չինաստանի Ժեյանգ նահանգի Քինշան բնակավայրի մոտ գտնվող ռեակտորներին:

<sup>22</sup> Ըստ որոշ տեղեկությունների, այդ ռեակտորները պետք է կառուցվեին Աիվազում՝ ժամանակին ֆրանսիացիների կողմից նախապատրաստված վայրում [1, c. 8], [3, pp. 8-9], [12], [13], [14]:

<sup>23</sup> Չին-իրանական միջուկային համագործակցության նկատմամբ զերգայուն էր նաև Իսրայելը: 1997թ. ապրիլին Իսրայելի վարչապետ Նաթանյահուի Պեկին կատարած այցի ընթացքում, Չինաստանի վարչապետ Լի Լանքինգը իր իսրայելացի պաշտոնակցին հավաստեց, թե չինական կողմը ԱԵՄԳ-ի կողմից չթույլատրվող միջուկային տեխնոլոգիաներ չի մատակարարի Իրանին:

րիկայի Միացյալ Նահանգների ճնշման ներքո Չինաստանն ստիպված էր կասեցնել կամ չեղյալ հայտարարել Իրանի հետ իր միջուկային համագործակցության պայմանագրերն ու գործարքները:

#### 4. Համագործակցությունը Ռուսաստանի հետ

Միջուկային ուլորտում Իրանի համագործակցությունը Ռուսաստանի հետ՝ ներկայումս Իրանի միջուկային ծրագրի հիմնական մասն է: Թերևս միայն այդ համագործակցության հաջող ավարտը կարող է հնարավորություն ընձեռնել Իրանին հասնելու լուրջ հաջողությունների դեռևս շահի օրոք հիմնադրված միջուկային ծրագրի սահմաններում:

Միջուկային ուլորտում համագործակցելու ռուս-իրանական առաջին փորձերը թվագրվում են 1980-ական թթ. կեսերին: 1989թ. հունիսի 22-ին ԻԻՀ խորհրդարանի նախագահ Ռաֆսանջանիի (որը հետագայում դարձավ ԻԻՀ նախագահ) Մոսկվա կատարած այցի ընթացքում ստորագրվեց «ԽՍՀՄ-ի և ԻԻՀ-ի միջև մինչև 2000թ. առևտրա-տնտեսական ու գիտատեխնիկական համագործակցության երկարաժամկետ ծրագիրը», որով նախատեսվում էր խորհրդային մասնագետների մասնակցությունը Իրանի էներգետիկ ոլորտի վերականգնման աշխատանքներին: Նախատեսվում էր Իրանում (Պարսից ծոցը թափվող գետերի՝ Ղորուն և այլն, վրա) կառուցել մի քանի ՅԷԿ-եր՝ 10 000 ՄՎտ գումարային հզորությամբ:

1992թ. օգոստոսի 25-ին Մոսկվան և Թեհրանը ստորագրեցին մի նոր համաձայնագիր, ըստ որի՝ Իրանի տարածքում պետք է կառուցվեին երկուսից չորս միջին հզորության ԱԷԿ-ներ: Այդ համաձայնագրով նախատեսվում էր նաև գիտա-հետազոտական աշխատանքների համար միջուկային ռեակտորի Իրան առաքման հնարավորությունը, բացի այդ՝ համատեղ գիտափորձեր միջուկային ոլորտում: Ընդունված ծրագրի համաձայն, ռուսաստանցի մասնագետները Իրանի հյուսիսում՝ Կասպից ծովի ափին, Գորգան քաղաքի մոտ պետք է ԱԷԿ կառուցեին: Սակայն, տեղանքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ տարածքում հնարավոր են 9 բալանոց երկրաշարժեր, իսկ կառուցվելիք ԱԷԿ-ը նախագծված էր առավելագույնը 8 բալանոց երկրաշարժի համար: Հետևաբար, ձեռնարկը կասեցվեց [1, c. 9]:

Միջուկային բնագավառում ռուս-իրանական համագործակցության վերելքը սկսվեց միայն 1990-ական թթ. կեսերից: Մինչ այդ տևած բանակցություններն ու նախապատրաստական աշխատանքը ռուս-իրանական մեծ պայմանագրի կնքմանն ուղղված էին:

1994թ. նոյեմբերի 20-ին պաշտոնական Թեհրանը հայտարարեց, թե Մոսկվան տվել է իր համաձայնությունը դեռևս շահի օրոք գերմանացիների կողմից սկսված և անավարտ մնացած Բուշերի ատոմակայանի կա-

ռուսական համար կնքել \$780 մլն.-ի պայմանագիր, որն ստորագրվեց 1995թ. հունվարի 8-ին: Շահի անկումից հետո, երբ աշխատանքները Բուլշերում դադարեցին, ԻԻՅ կառավարությունը Բուլշերում մշտապես 300-400 հոգիանոց անձնակազմ էր պահում: 1995թ.-ի դրությամբ, Իրանը Բուլշերի ԱԷԿ-ի վրա արդեն իսկ ծախսել էր մոտ \$6 մլրդ.: Ըստ պայմանագրի, Ռուսաստանը «Սիմենս»-ի PWR 1 300 ՄՎտ հզորության երկու ռեակտորների փոխարեն (որոնք ավերվել էին Իրաքի օդուժի ռմբակոծության հետևանքով), պետք է BBՅՔ-1 000 ռեակտորներ տեղադրեր:

Սկզբնական շրջանում նախատեսվում էր առաջին էներգաբլոկի շինարարությունն ավարտել 2000թ.-ին<sup>24</sup>: Շինարարության համար սարքավորումների և տեխնոլոգիաների ներմուծումը սկսվեց հենց 1995թ.-ից:

Միջուկային ոլորտում ռուս-իրանական համագործակցության նկատմամբ հենց սկզբից բավականին սուր ընդդիմադիր կեցվածք ընդունեցին Ամերիկայի Միացյալ Նահանգները, որոնք Իրանի ջանքերը սեփական միջուկային ոլորտում զնահատում են որպես ՁՈՁ ստեղծելու փորձ: Այդ առումով, Վաշինգտոնի քաղաքականությունն ուղղված էր խոչընդոտելու միջուկային ոլորտում Թեհրանի ծրագրերին<sup>25</sup>:

Իրանը նախատեսում էր Բուլշերի ատոմակայանի համար տուրբինները գնել ուկրաինական «Տուրբոատոմ» պետական ընկերությունից. այդ

<sup>24</sup> 1996թ. մարտի 18-ին ռուսական «Ձարուբեժատոմէներգոստրոյ» (*Зарубежтомэнергострой*) պետական ընկերության Թեհրանի գրասենյակի ղեկավար Անատոլի Ժիլինսկին հայտարարեց, թե Բուլշերի ԱԷԿ-ի շինարարությունը կավարտվի 55 ամսից (2000թ. հոկտեմբեր):

Ենթադրվում էր, որ Բուլշերում աշխատող ռուսաստանցի մասնագետների թիվը հասնում է մոտ 1000 մարդու, որոնց հետ ուսանում և աշխատում էին (վերապատրաստվում էին) իրանցի շուրջ 500 մասնագետներ [3, pp. 10-11]:

<sup>25</sup> 1995թ. մայիսի 10-ին, ԱՄՆ նախագահ Բիլ Զլինթոնի Մոսկվա կատարած այցի ժամանակ, ՌԴ նախագահ Բորիս Ելցինը հանդես եկավ հատուկ մի հայտարարությամբ, ըստ որի՝ ռուս-իրանական միջուկային համագործակցությունը նաև ռազմական տարրեր է պարունակել: Մասնավորապես, 1995թ. հունվարի 8-ի պայմանագրի չիրապարակված դրույթների համաձայն, Ռուսաստանը պետք է Իրանին մատակարարեր նաև ցեմտրիֆուգայի համար անհրաժեշտ սարքավորումներ (արժեքը՝ մոտ \$400 մլն.): Ըստ ռուսական մամուլի, Ելցինը ստիպված էր ընդունել այդ փաստը, երբ ԱՄՆ նախագահը նրան էր ներկայացրել ռուս-իրանական վերոհիշյալ պայմանագրի գաղտնի մասի պատճենները, որոնք ամերիկյան հատուկ ծառայությունների ձեռքն էին ընկել: Ըստ նույն աղբյուրների, այն ժամանակ ԱՄՆ-ին հաջողվեց կասեցնել ռուս-իրանական պայմանագրի՝ ցեմտրիֆուգաներին առնչվող մասի իրականացումը:

Ռուս-իրանական միջուկային համագործակցությունում ի հայտ եկած սահմանափակումները տարածվեցին նաև ռուս-իրանական ռազմա-տեխնիկական համագործակցության վրա: Նույն 1995թ. հունիսի 30-ին «Գոր-2եռնոմիրոդին» հանձնաժողովի (1993թ. սեպտեմբեր-1999թ. հուլիս) շրջանակներում կնքված հուշագրի համաձայն, Ռուսաստանը պետք է մինչև 1999թ. դեկտեմբերի 31-ը ավարտեր ռազմա-տեխնիկական ոլորտում Իրանի հետ վաղօրոք կնքված պայմանագրերով նախատեսված զենքի և զինտեխնիկայի (Mir-29 և Cy-24MK ինքնաթիռներ, 877ՅԿՄ սուզանավեր, հակաօդային պաշտպանության С-300ՅՅ համակարգեր, Т-72С տանկերի և ԵՄՊ-2 հետևակի մարտական մեքենաների արտադրության համար նախատեսված տեխնոլոգիաներ և սարքավորումներ, արժեքը՝ մոտ \$2 մլրդ.) մատակարարումը Իրանին՝ հետագայում նման պայմանագրեր չկնքելու պարտավորության ստանձնման դիմաց [16]:

հարցով բանակցությունները 1997-1998թթ. կարծես թե տվել էին իրենց արդյունքը: Սակայն, ամերիկյան կողմի ճնշման տակ, 1998թ. մարտի 6-ին Ուկրաինան և ԱՄՆ-ն կնքեցին հատուկ մի համաձայնագիր, ըստ որի՝ ուկրաինական կողմը պատվերներ ստացավ Ուկրաինային Խորհրդային Միությունից ժառանգություն մնացած ԱԷԿ-ների վերականգնման (նորացման) ծրագրի (արժեքը \$1.2 մլրդ.) շրջանակներում, փոխարենը հրաժարվեց անհրաժեշտ տուրքերից: Իրան առաքելուց (գործարքի արժեքը \$45 մլն.):

Նմանատիպ տուրքեր, սակայն, Իրանը 1999թ. փետրվարին պատվիրեց Սանկտ-Պետերբուրգի «Իժորսկիե զավոդ»-ին (Ижорские заводы)<sup>26</sup>: Ռուսական աղբյուրների համաձայն, 1998թ. դեկտեմբերին իրանական կողմից համապատասխան դրամական փոխանցումը ստանալուց հետո, ռուսական «Ատոմստրոյէքսպորտ» (Атомстройэкспорт) պետական ընկերության պատվերի համաձայն, «Իժորսկի գործարանում» Բուշերի ԱԷԿ-ի համար սկսեցին արտադրել առաջին սարքավորումները (1999թ.): Ուշագրավ է, որ նույն ժամանակ (1999թ.) «Իժորսկիե զավոդի» մամլո խոսնակ Նիկոլայ Դոմիչևը հայտարարեց, թե ռեակտորի նախնական շղթայի սարքավորումները Իրան կառաքվեն արդեն 2001թ. վերջին<sup>27</sup>:

ԱԷԿ-ի կառուցումից զատ, 1995թ. համաձայնագրով նախատեսված էր նաև իրանցի «մի քանի հարյուր» մասնագետների պատրաստում (վերապատրաստում) ռուսական համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում: 1999թ. հունվարին ԻԱԷԿ-ը հայտարարեց, թե հավաքագրվում են ֆիզիկայի, միջուկային ֆիզիկայի, մեխանիկական ինժեներիայի և համակարգչային գիտությունների գծով 225, անպայման ԻԻՅ քաղաքացի մասնագետներ, որոնք, գիտելիքների ստուգման նախնական փորձարկումից հետո պետք է ուղարկվեն Ռուսաստան՝ ուսուցման: 1999թ. փետրվարին Ռուսաստանի Ատոմային էներգիայի նախարարության մամլո ծառայությունը հայտարարեց, թե սպասվում է, որ այդ օրերին վերապատրաստման նպատակով Ռուսաստան կժամանեն իրանցի 30 մասնագետներ՝ հետագայում Բուշերի ԱԷԿ-ի կառավարումը իրականացնելու համար: Նույն այդ ժամանակ, Ռուսաստանի Դաշնության ատոմային էներգիայի նախարար Եվգենի Ադամովը հայտարարեց, թե մինչև 2000-2001թթ. Բուշերի ԱԷԿ-ը լիովին համալրված կլինի

<sup>26</sup> Ռուսական կողմին տուրքերից պատվիրումից հետո 1995թ. կնքված ռուս-իրանական գործարքի գինը բարձրացավ մինչև \$850 մլն.՝ նախկին \$780 մլն.-ի փոխարեն:

<sup>27</sup> Ի դեպ, միջուկային ոլորտում ռուս-իրանական համագործակցության խոչընդոտների հետ կապված մի հետաքրքիր փաստ. Իրանը բողոք հայտնեց, որ ռուս-իրանական միջուկային համագործակցության ֆինանսավորումը ռուսական կողմից իրականացնում են հրեաների վերահսկողության տակ գտնվող բանկերը [3, p. 11]:

իրանցի մասնագետներով<sup>28</sup>:

Ռուս-իրանական միջուկային համագործակցության ծավալները էական փոփոխությունների չեն ենթարկվել: Խնդիրն առաջացավ ներկայումս Իրանի շուրջ գործընթացների պատճառով:

## 5. Ռուսաստան-Իրան միջուկային համագործակցության վերջին զարգացումների շուրջ

Վերջին զարգացումների հետ կապված՝ պաշտոնական Մոսկվան հայտնվել է բավականին բարդ մի իրավիճակում. շարունակելով համագործակցությունը Թեհրանի հետ՝ սրելով իր հարաբերությունները ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների հետ, թե՞ ետ կանգնել այդ համագործակցությունից (կամ գոնե ժամանակավորապես դադար տալ): Այս հարցը բավականին սուր է դրված ոչ միայն այն պատճառով, որ Իրանի շուրջ ներկայումս կտրուկ կերպով աճել է միջազգային լարվածությունը, այլև՝ երևան է եկել Բուշերի ԱԷԿ-ի առաջին էներգաբլոկի շինարարության ավարտման և ատոմակայանը միջուկային վառելիքով ապահովելու հարցը: Մոսկվայի համար դա աշխարհաքաղաքական կարևորություն ներկայացնող հարց է: Այդ կապակցությամբ Մոսկվայի յուրաքանչյուր որոշում իր նշանակությունը կունենա գլոբալ կամ մեծ մերձավորարևելյան աշխարհաքաղաքական գործընթացներում ռուսական ազդեցության համար:

Մյուս կողմից, Իրանի միջուկային ծրագրի հարցը դարձավ ռուս-ամերիկյան հարաբերությունների կարևորագույն օբյեկտը, որի վրա ժամանակավորապես հանգեց Ռուսաստան-ԱՄՆ հարաբերությունների ողջ ծանրությունը: Այլ կերպ ասած, Վաշինգտոն-Մոսկվա երկխոսությունում Իրանի միջուկային խնդիրը ստացավ երկուստեք կարևորություն ներկայացնող մի շարք հարցերի գծով (տնտեսություն, Իրաք և այլն) փոխզիջման ձեռք բերման ելակետ: Մեր կարծիքով, ներկա դրությամբ Ռուսաստան-ԱՄՆ քաղաքականության կոնսենսուսի հերթական տարբերակը («իրավիճակային կոնսենսուս») ուրավագծվեց ելնելով իրանական հարցից:

Գործընթացը, փաստորեն, սկսվեց, երբ 2003թ. օգոստոսի 22-ին Ռուսաստանի կառավարությունը հավանության արժանացրեց Իրանի հետ ստորագրվելիք պայմանագրի նախագիծը, ըստ որի՝ Իրանին միջուկային վառելիք պետք է մատակարարվի: Օգոստոսի 25-ին հայտնի դարձավ, որ այդ պայմանագիրը նախատեսվում է կնքել սեպտեմբերի վերջին (ի դեպ, Ռուսաստանում ԻԻՅ դեսպանը դեռ 2003թ. հունիս ամսին էր հայտարարել, թե Իրանը պատրաստ է այդ պայմանագրի կնքմանը) [17]:

<sup>28</sup> Ռուսաստանում իրանցի մասնագետների ուսուցումն ու վերապատրաստումը գլխավորապես անցնում են ճապոնական դրամաշնորհի միջոցով նոր սարքավորումներ ձեռք բերած Նոկոլորո-նեժի ԱԷԿ-ին կից գործող կենտրոնում [3, p. 12]:

Օգոստոսի 26-ին «Աստիճեթեղ պրես» լրատվական գործակալությունը հաղորդեց, թե Ռուսաստանը և Իրանը պատրաստվում են հաջորդ ամսի կեսերին Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում ԱԵՄԳ-ի հերթական նստաշրջանի ժամանակ ստորագրել մի արձանագրություն, ըստ որի՝ Իրանը պետք է Ռուսաստանին վերադարձնի Բուշերի ատոմակայանի համար ռուսական կողմից ստացված և օգտագործված միջուկային ողջ վառելիքը: Այդ կապակցությամբ ռուսական «Ինտերֆաքս» (Интерфакс) լրատվական գործակալությունը հաղորդեց Ռուսաստանի ատոմային էներգիայի նախարար Ալեքսանդր Ռումյանցևի այն հայտարարությունը, թե Ռուսաստանը Իրանի Բուշեր ատոմակայանին միջուկային վառելիք չի մատակարարի մինչև որ վերոհիշյալ արձանագրությունը չկնքվի [17]<sup>29</sup>:

Իրանական միջուկային խնդրի հետ կապված ռուս-ամերիկյան նախնական փոխհամաձայնությունը, ըստ էության, ձեռք բերվեց ԱՄՆ պետական քարտուղարի միջազգային անվտանգության և սպառազինության վերահսկողության գծով տեղակալ Ջոն Բոլթոնի օգոստոսի 25-26-ը Փարիզ և Մոսկվա կատարած այցի ժամանակ (ըստ պաշտոնական հաղորդագրության՝ քննարկման առարկան Յուսիսային Կորեան և Իրանն էին [19]): Համեմայն դեպս, Բոլթոնի այցը նպատակ ուներ ընդհանուր առմամբ ուրվագծել փոխհամաձայնության տարբերակը («իրավիճակային կոնսենսուսի» սկզբնական ուրվագծում), որը շուրջ մեկ ամիս անց պետք է ձեռք բերվեր Քեմփ Դեյվիդում:

«Իրավիճակային կոնսենսուսի» վերջնական ձեռք բերումը տեղի ունեցավ սեպտեմբերի 23-28-ը Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի ԱՄՆ կատարած պաշտոնական այցի ընթացքում: Բուշ-Պուտին բանակցությունների արդյունքում, Մոսկվան, փաստորեն, համաձայնվեց սառեցնել Իրանի հետ իր միջուկային համագործակցությունը՝ մինչև «իրավիճակի հստակեցումը» (ԱՄՆ քաղաքականությունը Իրանի նկատմամբ, Իրան-ԱԵՄԳ համագործակցության արդյունքը՝ 2003թ. հոկտեմբերի 31 վերջնաժամկետով<sup>30</sup> և այդ կապակցությամբ գլոբալ գործընթացների հետևանքները):

Պուտինը հրապարակավ հավաստեց, թե Ռուսաստանը շարունակելու է Բուշերի ԱԵԿ-ի շինարարությունը: Հստակ է, որ Ռուսաստանը չի կարող հրաժարվել իրանական ԱԵԿ-ի շինարարությունից, ինչը, նախ և առաջ, կնշանակի ռուսական աշխարհաքաղաքական գծի փաստացի վերացում Մեծ Մերձավոր Արևելքում (չհաշված տնտեսական կորուստները): Բացի այդ, առկա է նաև ռուսական արտաքինքաղաքական կերպարի հարցը

<sup>29</sup> Իր հայտարարությունը Ռումյանցևը կրկնեց որոշ ժամանակ անց [18]:

<sup>30</sup> Այդ մասին մանրամասն տես հաջորդ բաժնում՝ «Իրան-Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԵՄԳ-IAEA)»:



ողջ աշխարհում՝ գլոբալ ռազմավարություն: Միևնույն ժամանակ, ՌԴ նախագահը Իրանին կոչ արեց համագործակցել ԱԵՄԳ-ի հետ՝ մինչև 2003թ. հոկտեմբերի 31-ը ԱԵՄԳ-ին ներկայացնել իր միջուկային ծրագրի վերաբերյալ անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը և ստորագրել «Լրացուցիչ արձանագրությունը»<sup>31</sup>: Առկա է նաև հետևյալիսային տեղեկատվություն. ըստ ամերիկացի ավագ պաշտոնյաների՝ Վաշինգտոնը կարողացել է Մոսկվայից խոստում ստանալ, թե վերջին պահին Իրան չի առաքի Բուշերի ԱԵԿ-ի համար անհրաժեշտ սարքավորումները, եթե Իրանը հրաժարվի համագործակցել ԱԵՄԳ-ի հետ [20]: Իսկ հոկտեմբերի 5-ին «Բի Բի Սի»-ին (**BBC**) տված հարցազրույցում վերոհիշյալ Ջոն Բոլթոնը հայտարարեց. «Դեռ մինչև նախագահ Բուշի հետ հանդիպումը, նախագահ Պուտինը հայտարարել էր, թե Ռուսաստանը միջուկային վառելիք չի մատակարարի Բուշերում գտնվող ռեակտորի համար, մինչև որ չիստակցվի Իրանի միջուկային ծրագրի շուրջ առկա իրավիճակը» [21]<sup>32</sup>:

Բուշ-Պուտին հանդիպմանը հաջորդած իրադարձությունները, փաստորեն, գալիս են ապացուցելու առաջարկված տեսակետի իսկությունը: Սեպտեմբերի 16-ին ՌԴ ատոմային էներգիայի նախարար Ալեքսանդր Բուլդանցևը Վիեննայում հանդիպեց ԻԻՅ փոխնախագահ, ԻԱԵԿ-ի նախագահ Ղուլամ Աբգա Աղազադեի հետ՝ ապարդյուն ելքով. Բուշերի ԱԵԿ-ի համար միջուկային վառելիքի մատակարարման հարցը մնաց չկարգավորված. ռուսական կողմը շարունակեց պնդել, թե միջուկային վառելիքի մատակարարման հարցը կապված է վերոհիշյալ արձանագրության ստորագրման հետ<sup>33</sup>, ըստ որի՝ Իրանը պետք է Ռուսաստանին վերա-

<sup>31</sup> Այդ մասին մանրամասն տես հաջորդ բաժնում՝ «Իրան-Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԵՄԳ-IAEA)»:

<sup>32</sup> Ուշագրավ է, որ դեռևս օգոստոսի 26-ին, երբ Բոլթոնը գտնվում էր Մոսկվայում, քրիտանական «Ռոյթերզ» (**Reuters**) լրատվական գործակալությունը հաղորդագրություն տարածեց, ըստ որի՝ ամերիկացի երկու անձնուհի բարձրաստիճան պաշտոնյա հավաստել են, թե Մոսկվան խոստացել է Վաշինգտոնին, որ մինչև 2004թ. գարունը Իրանը Ռուսաստանից միջուկային վառելիք չի ստանա [22]: Ժամանակային առումով այս հաղորդագրության համընկնումը Բոլթոնի առաքելության հետ, ըստ էության, քողագերծում է ԱՄՆ պետական քարտուղարի տեղակալի այցի նպատակները (ինչը մենք ներկայացրել ենք) ու ևս մեկ փաստարկ է հօգուտ «իրավիճակային կոնսենսուսի» տեսակետի:

<sup>33</sup> Արձանագրության հարցը ունի նաև այլ կողմ: Պաշտոնական Թեհրանը, ըստ էության, չի ցանկանում ստորագրել այդ արձանագրությունը՝ ձգտելով Բուշերի ռեակտորի օգտագործած միջուկային վառելիքը պահել իր մոտ: Մասնավորապես, իրանական «Շանա» (**Shana**) լրատվական գործակալությանը հոկտեմբերի 1-ին տված հարցազրույցում, ԻԱԵԿ-ի Տեխնիկական օժանդակության և միջուկային անվտանգության բաժնի ղեկավար դոկտոր Քարման Սեփանլուն հայտարարել է, թե Բուշերի ԱԵԿ-ի նախագիծը ներառում է նաև օգտագործված միջուկային վառելիքի պահուստարան և որ Բուշերի ԱԵԿ-ում կարելի է ամեն տարի պահել ռեակտորի օգտագործած վառելիքի 1/3-րդը, և այդպես՝ 8 տարի շարունակ [23]: Հարցեր են առաջանում. ինչու՞ է Իրանը համառուն այդ հարցում, ինչու՞ է կառուցվող Բուշերի ԱԵԿ-ի մեջ նախագծված միջուկային վառելիքի պահուստարան, հնարավոր է արդյոք, որ Մոսկվան ի սկզբանե համաձայնվել էր օգտագործված միջուկային վառելիքը թողնել Իրանին. հակառակ դեպքում, ինչու՞ է օգտագործված միջուկային վառելիքի հարցը նոր բարձրացվում:

դարձնի Բուշերի ատոմակայանի համար ռուսական կողմից ստացած և օգտագործած միջուկային ողջ վառելիքը [18]<sup>34</sup>:

Եվ վերջապես, հոկտեմբերի 13-ին հայտնի դարձավ, որ ՌԴ Ատոմային էներգիայի նախարարության նախաձեռնությամբ Բուշերի ԱԷԿ-ի շինարարության ռուս-իրանական համակարգող հանձնաժողովը որոշել է կազմել շինարարության ավարտի նոր գրաֆիկ՝ մինչև 2005թ. հետաձգելով<sup>35</sup> Բուշերի ԱԷԿ-ի առաջին էներգաբլոկի գործարկումը: Պաշտոնական պատճառաբանությունը այն է, որ դանդաղում է ռեակտորի գործարկման համար անհրաժեշտ մնացյալ 15% սարքավորումների ձեռք բերումը, որոնք Իրանը պետք է գներ այլ երկրներից [25], [26]:

Իրանական կողմը դժգոհ էր: Մինչ այդ, հավանաբար ունենալով որոշակի տեղեկություն, Իրանը կարծես թե նախազգուշացնում էր Մոսկվային: Հոկտեմբերի 1-ին ԻԱԷԿ-ի Տեխնիկական օժանդակության և միջուկային անվտանգության բաժնի ղեկավար դոկտոր Քարման Սեփանլուն հայտարարեց, թե ԱԷՄԳ-ի տնօրենների խորհրդի սեպտեմբերի 12-ին կայացրած որոշումը չի կարող հիմք հանդիսանալ ռուս-իրանական միջուկային համագործակցության դադարեցման համար, և եթե Մոսկվան հրաժարվի կատարել իր պարտականությունները, ապա պետք է փոխհատուցի իրանական կողմի կորուստները [23]:

Ամեն դեպքում, ռուսական կողմը, մինչև առկա գործընթացների ավարտը (թեկուզ և կարճաժամկետ կտրվածքով), որոշակի առումով սառեցնում է միջուկային ոլորտում Իրանի հետ իր համագործակցությունը. սակայն դա չի նշանակում, թե Մոսկվան հրաժարվում է այդ համագործակցությունից:

## 6. Իրան-Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ-IAEA)

ԱՄՆ-ն և նրա դաշնակիցները, մեղադրելով Իրանին միջուկային զենք ստեղծելու մեջ, վերջինից պահանջում են ստորագրել ԱԷՄԳ-ի կողմից 1997թ. սեպտեմբերին կազմված «Լրացուցիչ արձանագրությունը» (1968թ. կազմված և 1970թ. մարտի 5-ին ուժի մեջ մտած «Մի-

<sup>34</sup> Նշենք, որ Բուշերի ԱԷԿ-ի համար անհրաժեշտ միջուկային վառելիքի տարրերը արդեն իսկ պատրաստ են. նրանք պատրաստվել են ռուսական «Տվել» (Teen) ընկերության կողմից և պահպանվում են Նովոսիբիրսկում: Ըստ ռուս-իրանական 1995թ. պայմանագրի, միջուկային վառելիքը Ռուսաստանից Իրան պետք է մատակարարվի Բուշերի ԱԷԿ-ի առաջին էներգաբլոկի գործարկումից կես տարի առաջ [18]:

<sup>35</sup> Բուշերի ԱԷԿ-ի առաջին էներգաբլոկի շինարարության ավարտը հետաձգվել է մի քանի անգամ: 1995թ. պայմանագրով, առաջին էներգաբլոկի կառուցումը պետք է ավարտվեր 2000թ.-ին, հետո դա հետաձգվեց մինչև 2003թ. հունիսի 1-ը, հետո՝ մինչև 2004թ. կեսերը և ահա՝ 2005թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին նախատեսվում է առաջին էներգաբլոկի «ֆիզիկական գործարկումը», և միայն 2006թ. կեսերին առաջին էներգաբլոկը կսկսի էլեկտրաէներգիա արտադրել [24]:

ջուկային զենքերի չտարածման մասին պայմանագրին» կից), որի արդյունքում ԱԵՄԳ-ի փորձագետները, առանց պաշտոնական թեհրանին վաղօրոք տեղյակ պահելու, կարող են անակնկալ ստուգումներ անցկացնել Իրանի որևէ միջուկային օբյեկտում<sup>36</sup>:

2003թ. ամռանը տեղի ունեցած ԱԵՄԳ-ի բանակցություններից հետո, որի ժամանակ Իրանի վրա ճնշում էին գործադրում թե՛ Ամերիկայի Միացյալ Նահանգները, և թե՛ Եվրամիությունը, ստուգումներն Իրանի միջուկային օբյեկտներում օգոստոս ամսին սկսվեցին:

Օգոստոսի 26-ին արևմտյան տեղեկատվական դաշտում հրապարակվեցին հատվածներ ԱԵՄԳ-ի զեկույցից՝ Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ: Նշվում էր, թե ԱԵՄԳ-ի փորձագետները Իրանի միջուկային օբյեկտներից մեկում՝ Նաթանգի ուրանի հարստացման գործարանում բարձր հարստացված ուրանի հետքեր են հայտնաբերել: Այդ լուրը բավականին մեծ իրարանցման պատճառ դարձավ: Պաշտոնական թեհրանը շտապեց հայտարարել, թե հետքերը եղել այն սարքերի վրա, որոնք ներմուծվել են արտասահմանից՝ Իրանի միջուկային ծրագրի շրջանակներում [19], [28]: Որոշ ժամանակ անց, սակայն, պաշտոնական թեհրանն ընդունեց, որ 1990թ.-ին ինքն անցկացրել է ուրանի հարստացում, սակայն այդ մասին ոչինչ չի հայտնել ԱԵՄԳ-ին [29]<sup>37</sup>, իսկ հոկտեմբերի 26-ին ԻԻՅ Արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչը հայտարարեց, թե իրանցի մասնագետները դեռ չեն տիրապետում ուրանի հարստացումը դադարեցնող տեխնոլոգիային [31]:

Այդ տեղեկությունը բավականին մեծ աղմուկ բարձրացրեց միջազգային քաղաքականության մեջ: ԱԵՄԳ-ի գլխավոր քարտուղար Մուհամմեդ Էլ-Բարադեին զերմանական «Շտեռն» հանդեսին տված հարցազրույցում իր «մեծ անհանգստությունը» հայտնեց այս փաստի առթիվ: ԱՄՆ-ն ավելացրեց իր դիվանագիտական ճնշումը Իրանի վրա՝ Պետական քարտուղարության խոսնակ Ֆիլիպ Ռիկերի շուրթերով հայտնելով իր «լուրջ մտահոգությունն այդ հարցով» [19]:

Այս ամենի հետ կապված ուշագրավ տեղեկություն է հաղորդում Վաշինգտոնում գտնվող Գիտության և միջազգային անվտանգության ինստիտուտի տնօրեն Դեյվիդ Օլբրայթը: Ըստ նրա, տակավին բաց է այն հարցը, թե արդյոք Իրանը ուրանը ենթարկե՞լ է բարձր հարստաց-

<sup>36</sup> 1991թ.-ից սկսած, Իրանն արգելեց ԱԵՄԳ-ի փորձագետներին, առանց վաղօրոք տեղյակ պահելու, ստուգումներ անցկացնել իր միջուկային օբյեկտներում [27]:

<sup>37</sup> 2003թ. սեպտեմբերի 29-ին ԱԵՄԳ-ում ԻԻՅ ներկայացուցիչ Ալի Աքբար Սալեհին իրանական մի հեռուստատեսությամբ հայտարարեց, որ թեհրանի մոտ գտնվող «Կալայ-ե էլեկտրիկ» (*Kalay-e Electric*) ընկերության օբյեկտում ևս հարստացված ուրանի հետքեր են հայտնաբերվել: Սալեհին միաժամանակ հայտարարեց, թե այդ հետքերի հետ պաշտոնական թեհրանը ոչ մի կապ չունի [30]:

ման: Շարունակելով միտքը՝ Օլբրայթը նշում է, որ մեծ տերությունների մոտ շրջանառվում է այն տեսակետը, թե ուրանի հարստացման համար ցենտրիֆուգան Իրանը կարող էր ստանալ Պակիստանից [19]:

Սեպտեմբերի 8-ին Վիեննայում բացվեց ԱԵՄԳ-ի տնօրենների խորհրդի հերթական նիստը: Օրակարգում Իրանի միջուկային ծրագիրն էր: Նիստում լսվեց ԱԵՄԳ-ի փորձագետների վերոհիշյալ զեկույցը, որտեղ ամենագլխավոր կետն այն է, որ իրենք դեռևս չեն կարող հստակ պատասխանել, թե Իրանը չի անցկացրել ուրանի հարստացում (այսինքն չի զբաղվել միջուկային ռազմական ծրագրով): Բացի այդ, նշվում է, որ Նաթանգում ուրանի հարստացման հետքեր են հայտնաբերվել: Ձեկույցի հեղինակները թեհրանից պահանջեցին բացատրություն տալ Նաթանգում հայտնաբերված ուրանի հարստացման հետքերի վերաբերյալ, ԱԵՄԳ-ին տրամադրել իր միջուկային ծրագրի մասին ողջ տեղեկատվությունը, ինչպես նաև կոչ արեցին ստորագրել «Լրացուցիչ արձանագրությունը»: Նիստի ժամանակ հատուկ հայտարարությամբ հանդես եկավ ԱԵՄԳ-ի գլխավոր քարտուղար Մուհամմեդ Էլ-Բարադեին, որն Իրանից պահանջեց իր միջուկային ծրագրի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը ներկայացնել ԱԵՄԳ-ին:

Չնայած այդ ամենին, զեկույցը բավարար հիմքեր չի տալիս պնդելու, թե Իրանը խախտել է «Միջուկային զենքերի չտարածման մասին պայմանագիրը»: այդ հանգամանքը ընդունում են անգամ ԱՄՆ-ն և նրա դաշնակիցները [29]:

Ամերիկայի Միացյալ Նահանգները ձգտում են, որ ԱԵՄԳ-ն պաշտոնապես ճանաչի Իրանի կողմից վերոհիշյալ պայմանագրի խախտումը, ինչի արդյունքը կլինի ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդում իրանական քաղաքականության քննադատությունը՝ հետագա գործողությունների հեռանկարով:

Վիեննայում, ԱԵՄԳ-ի տնօրենների խորհրդի շրջանակներում, իրանական հարցի հետ կապված որոշման երկու նախագծեր քննարկվեցին. ա. ամերիկյան տարբերակը, որին աջակցում էին Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը, Գերմանիան, Ֆրանսիան, Ճապոնիան ու ևս շուրջ մեկ տասնյակ երկրներ (նախագծին կողմ է արտահայտվել նաև ԱԵՄԳ-ի գլխավոր քարտուղար Մուհամմեդ Էլ-Բարադեին), բ. Հարավաֆրիկյան Հանրապետության (ՀԱՀ), որը հանդես եկավ «Չմիացող երկրների»<sup>38</sup> անունից, նախագիծը ներկայացվեց սեպտեմբերի 10-ին: Ըստ ամերիկյան նախագծի, ԱԵՄԳ-ն պետք է Իրանի համար մի վերջնաժամ-

<sup>38</sup> «Չմիացող երկրների» շարժումը ստեղծվեց Սառը պատերազմի դարաշրջանում. հիմնադիրներն ու անդամները «Երրորդ աշխարհի» երկրներն էին, որոնք չէին հարում ոչ Վաշինգտոնին, ոչ Մոսկվային՝ պահպանելով չեզոքություն:

կետ (հոկտեմբերի 31, 2003թ.) հաստատի, մինչև երբ Իրանը պետք է ներկայացնի իր միջուկային ծրագրի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, բացի իր միջուկային ողջ ծրագրերը և օբյեկտները ԱԷՄԳ-ի փորձագետների առաջ: Ամերիկյան նախագծի համաձայն, Իրանը նաև պետք է ստորագրի «Լրացուցիչ արձանագրությունը» [20], [32]: ՀԱՀ-ի ներկայացրած նախագծում վերջնաժամկետը բացակայում էր [33]:

Սեպտեմբերի 12-ին կայացած քվեարկության ժամանակ ձայների մեծամասնությամբ անցավ ամերիկյան նախագիծը: Այսպիսով, Իրանի համար հաստատվեց վերջնաժամկետ (2003թ. հոկտեմբերի 31), մինչև երբ պաշտոնական թեհրանը պետք է ԱԷՄԳ-ի փորձագետների առջև բացի իր բոլոր միջուկային օբյեկտները, ներկայացնի սեփական միջուկային ծրագրին առնչվող ողջ տեղեկատվությունը, ինչպես նաև ստորագրի «Լրացուցիչ արձանագրությունը»: Հակառակ պարագայում, հարցի քննարկումն անցնում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ, որն էլ Իրանի դեմ կարող է պատժամիջոցներ կիրառել [34]:

Պաշտոնական թեհրանը, հերքելով միջուկային զենքի ստեղծման վերաբերյալ իր հասցեին հնչող մեղադրանքները, բավականին սուր կերպով արձագանքեց ԱԷՄԳ-ի տնօրենների խորհրդի սեպտեմբերի 12-ի որոշմանը: Ամերիկյան նախագծի ընդունումից հետո ԱԷՄԳ-ում Իրանի ներկայացուցիչը լքեց նիստերի դահլիճը, իսկ Իրանի արտաքին գործերի նախարար Քամալ Խարազին հայտարարեց, թե Իրանը կարող է վերանայել իր հարաբերությունները ԱԷՄԳ-ի հետ՝ լիովին դադարեցնելով իր կապերը վերջինիս հետ: Սրանք էին առաջին արձագանքները, որոնք, ըստ էության, սպասելի էին:

Սեպտեմբերի 12-ին հաջորդած գործընթացները մեծամասամբ դիվանագիտական մանևրներ էին թե՛ ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների կողմից, թե՛ Իրանի կողմից՝ առկա խնդրի կապակցությամբ կոշտ և մեղմ դիրքորոշումներ: Իրանական կողմի դիրքորոշումը բարդանում էր ևս երկու գործոնով: Նախ՝ իրանական վերնախավի ներսում առկա է տարածայնություն՝ համագործակցել, թե՛ ոչ ԱԷՄԳ-ի հետ. այդ հարցի կապակցությամբ երկրի կրոնական շրջանակները կոշտ մոտեցում ունեն: Ի հավելումն՝ պաշտոնական թեհրանը ձգտում է ամեն կերպ չթուլացնել իր դիրքերը առնվազն սեփական տեղեկատվական դաշտում. զիջումը արտաքին աշխարհին (իմա՝ ԱՄՆ-ին և նրա դաշնակիցներին) պետք է «պատշաճ» ձևով ներկայացվի Իրանի ժողովրդին:

Հոկտեմբերի սկզբին Իրան-ԱԷՄԳ բանակցությունները վերսկսվեցին: Բանակցություններում իրանական պատվիրակությանը ղեկավարում էր ԱԷՄԳ-ում ԻԻՀ ներկայացուցիչ Ալի Աքբար Սալեհին: Բանակցությունների առաջին փուլի արդյունքը այն եղավ, որ հոկտեմբերի 16-ին

ԱԷՄԳ-ի գլխավոր քարտուղար Մուհամմեդ Էլ-Բարադեին ժամանեց Թեհրան: Իրանի բարձրաստիճան ղեկավարների հետ հանդիպումներից հետո, Էլ-Բարադեին հավաստիացրեց, թե պաշտոնական Թեհրանը պատրաստակամություն է հայտնել «պատասխանել սեփական միջուկային ծրագրի հետ կապված ամեն հարցի, որը միջազգային հանրության անհանգստությունն է առաջացնում»: Թեհրանյան հանդիպումների ավարտին Էլ-Բարադեին հայտարարեց, թե ԻԻՅ Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար Հասան Ռոհանին<sup>39</sup> իրեն հավաստիացրել է, որ Թեհրանը պատրաստ է «Լրացուցիչ արձանագրությունը» ստորագրել [35], [36]:

Էլ-Բարադեիի այցին հաջորդեց ԱԷՄԳ-ի փորձագիտական խմբի ժամանումը Իրան: Հոկտեմբերի 18-20-ը տևած բանակցությունների արդյունքում հստակեցվեց ստորագրվելիք «Լրացուցիչ արձանագրության» բովանդակությունը (իրանական կողմի պնդմամբ՝ ստուգումներից զերծ պետք է մնան «ոչ միջուկային օբյեկտները», ինչպես նաև իսլամական սրբավայրերը): ԱԷՄԳ-ի Իրանին ներկայացրած պահանջների մեջ առաջնային էին «Լրացուցիչ արձանագրության» ստորագրումը և ուրանի հարստացման բնագավառում աշխատանքների դադարեցումը: Փոխարենը, Իրանը որպես ԱԷՄԳ-ի պահանջների կատարման պայման, առաջ քաշեց սեփական միջուկային ծրագիրը զարգացնելու իրավունքը («Խաղաղ ատոմ»):

Մասնավորապես, «Խաղաղ ատոմի» հետ էր կապված եվրոպական երեք երկրների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի արտաքին գործերի նախարարների (Ջեք Սթրոու, Դոմինիկ դը Կիլպեն, Յոշկա Ֆիշեր) այցը Թեհրան: «Եռյակը» պետք է Իրանին առաջարկեր համագործակցություն «Խաղաղ ատոմի» շրջանակներում՝ բնականաբար, ԱԷՄԳ-ի վերահսկողության ներքո, փոխարենը Թեհրանը պետք է կատարեր ԱԷՄԳ-ի ներկայացրած պահանջները [37], [38], [39]:

«Եռյակի» առաքելության արդյունքում՝ Թեհրանն ի վերջո համաձայնվեց «ԱԷՄԳ-ի հետ լիակատար համագործակցությանը» (դա նշանակում է, որ ԱԷՄԳ-ի փորձագետները արդեն իսկ կարող են ստուգումներ անցկացնել Իրանի միջուկային օբյեկտներում), խոստացավ ստորագրել «Լրացուցիչ արձանագրությունը» (Հասան Ռոհանին հայտնեց իր պատրաստակամությունը ստորագրել «Լրացուցիչ արձանագրու-

<sup>39</sup> Հասան Ռոհանին, լինելով ԻԻՅ Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղարը, պատասխանատու է նաև Իրանի միջուկային ծրագրի համար: Եթե Ղուլամ Ռեզա Աղազադեն ԻԻՅ նախագահ, բարեփոխական խաթամիի մարդն է Իրանի միջուկային ծրագրում (այդ պաշտոնում նշանակվել է խաթամիի կողմից 1997թ.-ին), ապա Ռոհանին ներկայացնում է պահպանողական թևը (այաթոլլա խամենեի), և, փաստորեն, ավելի մեծ ազդեցություն ունի Իրանի միջուկային ծրագրում, քան Աղազադեն:

թյունը»<sup>40</sup>, և, վերջապես, Իրանը պետք է դադարեցնի ուրանի հարստացման բնագավառում առկա աշխատանքները: Յուրեղների 23-ին, ԻԻՅ իշխանությունները Թեհրանում ԱԷՄԳ-ի ներկայացուցչություն փոխանցեցին Իրանի միջուկային ծրագրի ողջ գործունեությանն առնչվող հայտարարագիրը, ինչը պահանջվում էր անել մինչև հոկտեմբերի 31-ը [40], [41], [42], [43]: ԱԷՄԳ-ի նախնական պատասխանը դրական էր: Մուհամմեդ Էլ-Բարադեին այդ կապակցությամբ հայտնեց իր գոհունակությունը. «Մենք մեծ առաջընթաց ենք ունեցել: Իմ համոզմամբ, Իրանի ներկայացրածը մանրամասն և ճշգրիտ հայտարարագիր է» [44]:

Ընդհանուր առմամբ, «իրավիճակի ձևավորումը» կրկին գտնվում է ԱԷՄԳ-ի «իրավասության ներքո»: Մինչև նոյեմբերի 20-ը ԱԷՄԳ-ն պետք է հերքի կամ հաստատի ռազմական տարրի առկայությունը Իրանի միջուկային ծրագրում: Դրական պատասխանի դեպքում՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը իրավասու է պատժամիջոցներ կիրառել ԻԻՅ-ի դեմ: Արդյունքում՝ գործընթացները կստանան այլ որակ՝ Իրանի շուրջ լարվածությունը կտրուկ կաճի:

## 7. Ձարգացման հավանական սցենարներ

Իրանի շուրջ առկա զարգացումների հետ կապված ամենահավանական սցենարը լարվածության հետագա աճն է: Գործընթացների զարգացման օբյեկտիվ էվոլյուցիայի տեսանկյունից հանգում ենք հետևյալ մտքին՝ վերջին երեք տարվա ընթացքում ի հայտ եկած գործընթացները, որոնք լարվածություն են ստեղծում Իրանի շուրջ, գերազանցապես սկզբնավորվել են ամերիկյան քաղաքականության պատճառով (լարվածության ստեղծման և աճի ազդակները եկել են ԱՄՆ-ի քաղաքականությունից), ուստի և նրանք նախորդ ծրագրավորված են եղել: Ելնելով այդ ամենից՝ դժվար է ենթադրել, որ միջազգային հարաբերությունների կամ համաշխարհային քաղաքականության ամերիկացի ծրագրավորողները պետք է անավարտ թողնեն ամերիկյան գլոբալ ռազմավարության մասը հանդիսացող «Մեծ Մերձավոր Արևելք» նախագծի ներկայումս ամենակարևոր տարրը՝ իրանական հարցի լուծումը:

Իրանական հարցի զարգացման *ռազմավարական* կանխատեսման տեսանկյունից, ամենայն հավանականությամբ, այն ենթակա է բար-

<sup>40</sup> Նախատեսվում է, որ «Լրացուցիչ արձանագրությունը» կստորագրվի ավելի ուշ: Ըստ ԻԻՅ Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար Յասսան Ռոհանու, «Լրացուցիչ արձանագրությունը», ամենայն հավանականությամբ, կստորագրվի ոչ շուտ քան նոյեմբերի 20-ը: Սա ունի իր պատճառը՝ մինչև նոյեմբերի 20-ը ԱԷՄԳ-ն պետք է հերքի կամ հաստատի Իրանի միջուկային ծրագրում ռազմական ուղղության առկայության վարկածը: Վերջինիս դեպքում՝ Իրանի հարցը անցնում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի քննարկմանը, հավանական զարգացումը պատժամիջոցներ Իրանի դեմ [40]:

դացման, լարվածության աճի, իսկ որպես ներկա աշխարհակարգի բարոյական, իրավական, համակարգային պահանջներին չհամապատասխանող մաս, գործելու են իրանական հարցի հետ կապված միջուկային գործոնը՝ Իրանի միջուկային ծրագիրը, ինչպես նաև մարդու իրավունքների խնդիրը ԻԻՅ-ում:

Ներկայումս, *մարտավարական* առումով, իրանական խնդրի էվոլյուցիան ունի երկու հիմնական տարբերակ՝ ժամանակավոր դադար Իրանի շուրջ առկա լարվածությունում<sup>41</sup> կամ լարվածության կտրուկ աճ՝ ներքին (հասարակական-քաղաքական ցնցումներ, իրանական առկա վարչակարգի փլուզում) և արտաքին (քաղաքական-տնտեսական ճնշում, ռազմական ուժի կիրառման սպառնալիք կամ կիրառում) գործոններով, որոնք, ի դեպ, հանդես են գալիս որպես միմյանց փոխլրացնող գործոններ: Այսօր առկա են և՛ առաջին, և՛ երկրորդ տարբերակների նշանները:

Որպես առաջին տարբերակի հանգուցային գործոն հանդես է գալիս հետսադղամյան Իրաքի հարցը: Այդ առումով ուշագրավ է իրանա-ամերիկյան համագործակցությունը: Յոկոտեմբերի սկզբին «Վաշինգտոն փոստ» (*The Washington Post*) թերթին տված հարցազրույցում, ԱՄՆ պետական քարտուղար Քոլին Փաուելը նշել էր, թե Վաշինգտոնը թեհրանից ստացել է բանակցություններ սկսելու առաջարկություն, և տվել իր դրական պատասխանը: Լիովին նոր մակարդակ էր իրանական կողմին ուղղված հրավերը՝ մասնակցելու հետսադղամյան Իրաքի վերականգնման համար հրավիրված միջազգային կոնֆերանսին, որը բացվել էր հոկտեմբերի 23-ին, Մադրիդում: Ըստ որոշ տեղեկությունների, ամերիկյան և իրանական պատվիրակություններն այդ կապակցությամբ պետք է առանձին հանդիպումներ ունենային ժնևում [45], [46]: Եվ վերջապես, հոկտեմբերի 29-ին ԱՄՆ պետական քարտուղարի տեղակալ Ռիչարդ Արմիտեջը, ելույթ ունենալով ԱՄՆ Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի առջև, հայտարարեց, թե Իրաքի և թմրադեղերի դեմ պայքարի կտրվածքով ԱՄՆ-ն պատրաստ է «սահմանափակ քննարկումներ» վարել Իրանի հետ [47]:

Ուշագրավ է, որ Իրանը տարածաշրջանի առաջին երկիրն էր, որ ճանաչեց ամերիկացիների կողմից վերջերս Իրաքում ստեղծված «Կառա-

<sup>41</sup> Ժամանակավոր դադարը կամ, առավել ևս, համագործակցությունը թեհրանի հետ հարկավոր է Վաշինգտոնին՝ հետսադղամյան Իրաքում իրավիճակը կայունացնելու, ինչպես նաև սեփական քաղաքականության պատճառով միջազգային համակարգում իր նկատմամբ առաջացած լարվածությունը մեղմելու համար: Իր հերթին, Իրանը ևս ձգտում է օգտագործել հետսադղամյան Իրաքի կարգավորման գործոնը (հայտնի է Իրանի ազդեցությունը Իրաքի շիաների մեջ)՝ իրանա-ամերիկյան ներկայիս հարաբերություններում, սեփական միջուկային ծրագրի հետ կապված գործընթացներում. նպատակը՝ ԱՄՆ-ի հետ մերձեցումն է, ինչպես նաև միջուկային ծրագրին առնչվող լարվածության թուլացումը:



վարող խորհուրդը» ու ներկայումս նրա հետ բանակցություններ է վարում՝ համագործակցության նպատակով: Մասնավորապես, խնդիր է դրված վերականգնել հունանիտար ոլորտում Իրաքի և Իրանի միջև եղած համագործակցությունը, որն առկա էր Սադդամ Հուսեյնի օրոք [48]. Բացի այդ, վերոհիշյալ խորհրդի մի շարք անդամներ երբեմն թեհրան են մեկնում<sup>42</sup>:

Շատ ազդեցիկ է նաև արտաքին գործոնը: Ընթացքի մեջ է միջազգային քաղաքական, դիվանագիտական ճնշումը (ԱՄՆ և նրա դաշնակիցներ, ԱԵՄԳ, և, վերջապես, Եվրոպական Միություն), որը կարող է իր զարգացման արդյունքում<sup>43</sup> «անհրաժեշտ նախապայմանը» ստեղծել ավելի կոշտ քայլերի ձեռնարկման համար (Իրաքի պարագան բավականին լուրջ նախադեպ է):

Ավելի կոշտ քայլերի առումով չափազանց հետաքրքիր է այս տարվա օգոստոս ամսին ամերիկյան «Վաշինգտոն փոստ» օրաթերթում հրապարակված այն տեղեկությունը, ըստ որի՝ Սպիտակ տան վարչակազմը մտահոգված է Իսրայելի կողմից Բուշերի ԱԵԿ-ի հավանական ռմբակոծման կապակցությամբ<sup>44</sup>: Ենթադրվում էր, որ դա եղել է նույն ամսին Վաշինգտոնում կայացած Ջորջ Բուշ-կրտսեր - Արիել Շարոն հանդիպման խոսակցության թեմաներից մեկը: Ի պատասխան այդ տեղեկությունների, Իսրայելը պաշտոնապես հերքեց նման ծրագրերի գոյությունը: Ի դեպ, նման լուրերի և հերքումների միջոցով տեղեկատվական դաշտում ստեղծվում է Իրանի նկատմամբ հավանական կոշտ քայլերի կիրառման տեղեկատվական անհրաժեշտ ապահովումը, ֆոնը [49]:

Բուշերի հավանական ռմբակոծության իսրայելական տարբերակը իր զարգացումը գտավ տեղեկատվական դաշտում: Սեպտեմբերի կե-

<sup>42</sup> Մասնավորապես, Իրաքի իսլամական հեղափոխության (Իրաքի շիաների քաղաքական անենամեծ կազմակերպությունը) Գերագույն խորհրդի քաղաքական առաջնորդ Աբդուլ Ազիզ ալ-Հակիմը, որը օգոստոսի 29-ին իրաքյան ԷՆ-Նաջաֆ քաղաքում սպանված այաթոլլա Մուհամմադ Բաքեր ալ-Հաքիմի եղբայրն է, հոկտեմբերի 8-ին գտնվում էր Թեհրանում և Իրաքի «Կառավարող խորհուրդ»- ԻԻՀ կառավարություն ձևաչափով բանակցություններ էր վարում ԻԻՀ արտաքին գործերի նախարար Քամալ Խարազիի հետ [30]:

<sup>43</sup> Այստեղ անհրաժեշտ է նշել այն, որ անգամ «Լրացուցիչ արձանագրության» ստորագրումը գործընթացի ավարտ չի կարող նշանակել: «Լրացուցիչ արձանագրության» շնորհիվ Իրանի միջուկային օբյեկտներում ստուգումներ սկսած ԱԵՄԳ-ի փորձագետները կարող են «հայտնաբերել» (իրաքյան տարբերակ) կամ իրոք հայտնաբերել միջուկային զենքի ստեղծման հետքեր: Այսինքն, «Լրացուցիչ արձանագրության» ստորագրումը կամ չստորագրումը ԱՄՆ-ին չի զրկում պաշտոնական Թեհրանի նկատմամբ ճնշումներ բանեցնելու մեխանիզմներից:

<sup>44</sup> Հիշեցնենք, որ նման փորձ Իսրայելն ունի: 1981թ. հունիսի 7-ին, իսրայելական օդուժը ռմբակոծեց Բաղդադին մոտ գտնվող միջուկային ռեակտորը, որը ֆրանսիացիներն էին կառուցում: Իսրայելական հետախուզության տվյալներով՝ Իրաքը (իմա՝ Սադդամ Հուսեյնը) պատրաստվում էր վերոհիշյալ ռեակտորի օգնությամբ միջուկային զենք ստանալ:

սերին, գերմանական «դեր Շպիգել» հանդեսը հրապարակեց մի տեղեկություն, ըստ որի՝ իսրայելական հատուկ ծառայությունները մշակել են Իրանի տարածքում «կասկածելի» մի շարք օբյեկտների (ինչ՝ միջուկային օբյեկտների կամ միջուկային ծրագրի հետ կապված օբյեկտների) ռմբակոծության ծրագիրը, որը նախատեսում է նաև Բուշերի ԱԷԿ-ի ռմբակոծումը [50]: Միանշանակ է, որ «Իսրայել-Բուշեր» գծի հետ է կապված նաև իսրայելացի ռազմական օդաչու Ռոն Արադի հարցը: 2003թ. հոկտեմբերի 10-ին, Թել-Ավիվում լույս տեսնող «Եդիոտ ահարոնոտ» օրաթերթը տեղեկություն տարածեց, թե Լիբանանում անհետ կորած համարվող Արադը իրականում գտնվում է Թեհրանին մերձակա բանտերից մեկում [51]: Չնայած պաշտոնական Թեհրանը շտապեց հերքել այդ լուրը, սակայն իսրայելական (և ոչ միայն) տեղեկատվական դաշտում (հետևաբար՝ նաև հասարակության համար) ԻԻՅ-ը միահյուսվեց խիստ բացասական ֆոնի հետ, այն է՝ Իրանն, արդեն իսկ սպառնալիք է ներկայացնում Իսրայելի անվտանգությանը՝ օդաչու Ռոն Արադը ողջ Իսրայելն է<sup>45</sup>:

Նման լուրերը, անգամ նրանց հերքումները, առնվազն ունեն մեկ նպատակ. նրանց միջոցով տեղեկատվական դաշտում ստեղծվում է Իրանի նկատմամբ հավանական կոշտ, ըստ էության՝ ուժային քայլերի կիրառման տեղեկատվական անհրաժեշտ ապահովումը, ֆոն, որը, բնականաբար, որոշակի համակարգված գործողության միայն մեկ մասն է:

Ի մի բերելով *մարտավարական* երկու տարբերակներն էլ՝ անհրաժեշտ է նշել, որ երկուսի դեպքում էլ ռեսուրսների (քաղաքական, տնտեսական, ռազմական, անգամ՝ գաղափարախոսական) տարբերության պատճառով, առաջնային քայլի «մենաշնորհը», փաստորեն, պատկանում է ԱՄՆ-ին: Իր հերթին, իրանական հարցի մարտավարական քայլերի առումով, Վաշինգտոնը ելնելու է Մեծ Մերձավոր Արևելքում տիրող իրավիճակից, հետսադղամյան Իրաքի հարցում ԵՄ-ի, Ռուսաստանի և Չինաստանի հետ իր պայմանավորվածություններից, և, ի վերջո, ԱՄՆ-ի ներքաղաքական զարգացումներից: Իրանական հարցի մարտավարական զարգացման առաջնային գործոնները սրանք են: Այս գործոններով է պայմանավորված լինելու իրանական հարցի մարտավարական ընթացքը՝ տարբերակը:

Ամեն դեպքում, բացառվում է այն սցենարը, ըստ որի՝ Իրանի շուրջ

<sup>45</sup> Այդ ամենով հանդերձ, չի բացառվում, որ «Իսրայել-Բուշեր» գիծը մարտավարական խնդիր է լուծում իրանական հարցի «լուծման» մարտավարության մեջ՝ իրականացնելով ուժի կիրառման սպառնալիքի իր դերը, օրինակ՝ Իրան-ԱԷՄԳ բանակցությունների ենթատեքստով:

առկա ներկայիս լարվածությունը կարող է ինքնիրեն հանդարտվել: Դա քիչ հավանական է<sup>46</sup>, քանզի խնդիրներն այդ պարագայում չեն լուծվում:

### Եզրակացություն

Իրանը հայտնվել է եվրասիական աշխարհաքաղաքական շարժերի կիզակետում: Ներկայումս, նա այդ շարժերի կենտրոնական գործոնն է, որն ունի համակարգաստեղծ նշանակություն եվրասիայի Մեծ Մերձավոր Արևելք միավորի համար, և, վերջինիս միջոցով՝ ազդեցություն ունի եվրասիական աշխարհաքաղաքական դաշտի վրա: Եվրասիական աշխարհաքաղաքական դաշտում իրանական հարցը ներկայումս ավելի շատ կարևորություն ունի, քան նույն հետսադրամյան Իրաքի շուրջ ընթացող քաղաքականությունը, քանզի իրանական զարգացումները նոր փուլ են բացում եվրասիական ռազմավարության համար (եվրասիական աշխարհաքաղաքական նոր փոխդասավորվածություն):

Իրանի հետ կապված գործընթացներն այժմ կենտրոնացել են Իրանի միջուկային ծրագրի շուրջ: Թեհրանի միջուկային ծրագիրը դարձել է առկա զարգացումների այն օբյեկտը, որը որոշում է Իրանի հետ կապված գործընթացների ուղղությունը: Միջուկային ծրագիրը առաջնային գործոն է մեծ մերձավորարևելյան աշխարհաքաղաքական գործընթացներում:

Իրանի միջուկային ծրագրի միջոցով է ընթանում ռուսական աշխարհաքաղաքական գիծը Մերձավոր Արևելքում, որն ապահովում է Մոսկվայի ներկայությունը (անկախ ներկայության աստիճանից) մեծ մերձավորարևելյան գործընթացներում: Բացի Իրանից, Ռուսաստանը Մերձավոր Արևելքում որևէ այլ երկրի նկատմամբ լուրջ ազդեցություն չունի<sup>47</sup> (ռուսական քաղաքական, տնտեսական և ռազմական ներուժը թույլ չեն տալիս այդ անելու): Ռուսական միջուկային տեխնոլոգիաները, Բուշերի ԱԷԿ-ի հետագա սպասարկումը (միջուկային վառելիք, սարքավորումներ, մասնագետներ և այլն)<sup>48</sup> իրանական քաղաքականության վրա հաստատում են որոշակի ազդեցություն, որն էլ Մերձավոր Արևելքի պարագայում նշանակում է Մոսկվայի ներթափանցում տարածաշր-

<sup>46</sup> Այդ լարվածությունը կարող է սառել, բայց ոչ երբեք վերանալ:

<sup>47</sup> Այս առումով բավականին հետաքրքիր զարգացումներ են նկատվում ռուս-սաուդյան հարաբերություններում: 2001թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո նկատվող սաուդա-ամերիկյան հարաբերությունների սառեցումը, անգամ լարվածությունը կարող է Մեծ Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական փոխդասավորումներում նոր զարգացումների պատճառ հանդիսանալ:

<sup>48</sup> Պետք է ավելացնել նաև ռուսական զենքն ու զինամթերքը: Ըստ տարբեր գնահատականների՝ ԻԻՅը Ռուսաստանից տարեկան գնում է \$300-500 մլն. զենք և զինամթերք՝ դառնալով ռուսական զենք և զինամթերք ներմուծող երրորդ խոշոր երկիրը աշխարհում՝ Չինաստանից և Ղազախստանից հետո:

ջան: Միջուկային ուղորտում ռուս-իրանական համագործակցությունը Մոսկվա-Թեհրան աշխարհաքաղաքական գծի առանցքն է: Այդ ծրագրի դադարեցման կամ կասեցման պարագայում, վերոհիշյալ գիծը էականորեն թուլանում է, չի բացառվում անգամ, որ այն լիովին վերանա: Այստեղից էլ՝ ռուսական կողմի բացասական կեցվածքը ամերիկյան հորդորներին, ճնշումներին՝ դադարեցնելու միջուկային համագործակցությունը Իրանի հետ՝ ունի ոչ միայն (ոչ այնքան էլ) տնտեսական պատճառ<sup>49</sup>:

Իրանի միջուկային ծրագիրը և հատկապես նրա հաջող իրականացումը զգալիորեն բարձրացնում են Թեհրանի ազդեցությունը մեծ մերձավորարևելյան հարաբերություններում: Միջուկային տերություն Իրանը տարածաշրջանային «ուժի կենտրոն» կդառնա: Յետևանքը՝ բավականին կբարդանա պաշտոնական Թեհրանի շահերի անտեսումը: ԻԻՀ-ի արտաքին քաղաքականության մեջ առկա են գաղափարախոսական տարրեր՝ պայմանավորված իսլամի վրա հիմնված աստվածապետական համակարգով (այաթոլլաների համակարգ). այդ առումով, նրա արտաքին քաղաքականությունը բավականին կոշտ է, միջուկային զենքը էլ ավելի կկոշտացնի (Թեհրանի մեկնաբանմամբ՝ կամրապնդի) այդ քաղաքականությունը, ինչին ձգտում է Իրանի պահպանողական վերնախավը՝ Իրանի փաստացի ղեկավարությունը:

Արդիական է դառնում միջուկային զենք ստեղծելու Իրանի հնարավորությունների հարցը: Ելնելով վերը շարադրվածից, մեր կարծիքով, միանշանակ է միջուկային զենք ստեղծելու ռազմավարական նպատակի գոյությունը իրանական վերնախավի համար<sup>50</sup> խնդիրը, թերևս, ժամանակի մեջ է: Թեև արևմտյան (գլխավորապես՝ ամերիկացի) փորձագետները նշում են, որ 1980-ական թթ. վերջին-1990թթ. սկզբին Իրանի միջուկային ծրագիրը դեռևս գտնվում էր սկզբնական մակարդակում<sup>51</sup>, սակայն նույն շրջանակների հավաստմամբ 1990-ական թթ. Իրանը թափ հաղորդեց իր միջուկային ծրագրին: ԱՄՆ Ազգային անվտանգու-

<sup>49</sup> Չնայած բարձր է հավանականությունը, որ ստանալով ԱՄՆ-ից որոշակի զիջումներ (ֆինանսատնտեսական հարցերում, հետսարդամյան Իրաքի «կարգավորման» գործում և այլն, որոնք շուտով ի հայտ կգան) և, միաժամանակ, ենթարկվելով ԱՄՆ-ի դիվանագիտական ճնշմանը, Մոսկվան գնա կամ արդեն իսկ գնում է Իրանի հետ իր միջուկային համագործակցության սառեցմանը՝ մինչև որոշակի գործընթացների հստակեցումը (ԱՄՆ քաղաքականությունը Իրանի նկատմամբ, Իրան-ԱԷՄԳ համագործակցության արդյունքը՝ 2003թ. հոկտեմբերի 31 վերջնաժամկետով և այդ կապակցությամբ գլոբալ գործընթացների հետևանքները), սակայն սառեցումը ռազմավարական հեռանկար չունի:

<sup>50</sup> Դեռևս 1991թ. հոկտեմբերին ԻԻՀ փոխնախագահ այաթոլլահ Մոհաջերանին հայտարարեց, թե Իրանը պետք է աշխատի իսլամական մյուս պետությունների հետ՝ «իսլամական ռումբ» ստեղծելու համար:

<sup>51</sup> Ըստ ամերիկյան տվյալների՝ 1980-ական թթ. վերջին Իրանն ուներ միջուկային ուղորտի հետ կապված մոտ 500 ֆիզիկոսներ, ինժեներներ և այլ մասնագետներ, Իրաքի 7500-ի դիմաց [3, p. 3]:

թյան խորհրդի նախկին մի աշխատակցի հեղինակած ու 1990-ական թթ. կեսերին հրապարակված մի զեկույցի համաձայն, միջուկային զենք ստեղծելու ուղղությամբ Իրանի ծախսերը կազմել էին մոտ \$10 մլրդ.: Ամերիկացի փորձագետների գնահատականներով, միջուկային զենք ստեղծելու Իրանի ծրագիրը բավականին դանդաղ է ընթանում: 1992թ.-ին, ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչությունը (ԿՅՎ) կանխատեսել էր, թե Իրանը միջուկային զենք կունենա արդեն 2000թ.-ին: 1995թ.-ին, ԿՅՎ-ի փորձագետներից Ջոն Յոլումի գնահատականներով, Իրանը կարող էր միջուկային զենք ստանալ 2003թ.-ին: Երկու տարի անց՝ 1997թ.-ին, նույն Ջոն Յոլումը փոխեց իր գնահատականները, կանխատեսելով, որ Իրանը միջուկային զենք կարող է ստեղծել միայն 2005-2007թթ. սահմաններում [52], [53]:

Այս պարագայում պետք է հաշվի առնել ևս երկու հանգամանք. Իրանը իր միջուկային ծրագիրը սկսել է մոտ 35 տարի առաջ: Թեև Իսլամական հեղափոխությունը կանգնեցրեց Իրանի միջուկային ծրագրի զարգացումը, սակայն հետագայում այն շարունակվեց, ընդ որում՝ նոր մակարդակով: Հնդկաստանից և Պակիստանից պահանջվեց 20 տարուց էլ պակաս ժամանակ՝ սեփական միջուկային զենքն ստեղծելու համար: Ներկայումս, երբ միջուկային տեղությունների թվաքանակը գրեթե կրկնապատկվել է, միջուկային տեխնոլոգիաների ձեռք բերումը դարձել է ավելի հեշտ, Իրանի համար միջուկային զենք ստեղծելու ժամանակային սահմանն արդեն վաղուց պետք է սպառված լիներ կամ մոտ է սպառման<sup>52</sup>: Եվ վերջապես, աշխարհի առաջատար երկրների (ԱՄՆ, եվրոպական երկրներ, Ռուսաստան, Ճապոնիա և այլն) անհանգստությունը, որոնք 2003թ. սեպտեմբերի 12-ին ԱԷՄԳ-ի տնօրենների խորհրդի նիստի ժամանակ քվեարկեցին ամերիկյան նախագծի օգտին, ևս պետք է հաշվի առնել:

Հստակ է, որ միջուկային Իրանը խոչընդոտ է Ամերիկայի Միացյալ Նահանգների համար: Ընդհանրապես, ինչ վարչակարգ էլ հաստատվի Իրանում, ԱՄՆ-ի շահերից չի բխում այդ երկիրը տեսնել միջուկային տեղությունների շարքում: Մեր կարծիքով, «Մեծ Մերձավոր Արևելք» նախագծի համար լուրջ խոչընդոտ է տարածաշրջանի մասը կազմող որևէ միջուկային տեղության ի հայտ գալը, որի դեպքում մեծանում է այդ երկրի ինքնուրույնության աստիճանը ամերիկյան ռազմավարության նկատմամբ:

Միջուկային հարցի արժարծումը ԱՄՆ-ի կողմից՝ հետապնդում է մի քանի նպատակներ: Նախ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները Իրանի միջուկային ծրագրի մեջ իրոք սպառնալիք են տեսնում իրենց «Մեծ

<sup>52</sup> Հիշեցնենք, որ Նաթանգուն Իրանը ուրանի հարստացման փորձեր է արել դեռևս 1990թ.-ին:

Մերձավոր Արևելք» նախագծի նկատմամբ: Երկրորդ, Իրանի միջուկային ծրագրի հարցի արժարժույթը մի մեխանիզմ է, որի «օգնությամբ», միջազգային իրավական համակարգի միջոցով, կարելի է ԻԻՅ-ի նկատմամբ ճնշումները խորացնել՝ այն բարձրակետին հասցնելով. քննարկումներ ԱԷՄԳ-ում, այնուհետև՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում, որից հետո պատժամիջոցներ, ուժի կիրառման սպառնալիք կամ ուժի կիրառում: ԱՄՆ-ն ձգտելու է թույլ չտալ Իրանին ձեռք բերելու միջուկային զենք. բացի այդ, օգտագործելու է Իրանի միջուկային ծրագիրը (որպես ճնշամիջոց) «հարմարեցնելու» համար Իրանի տեղը (ամենայն հավանականությամբ՝ առկա վարչակարգի, որպես նվազ կանխատեսելի, փոփոխման ճանապարհով) իր «Մեծ Մերձավոր Արևելք» նախագծում:

### Աղբյուրների և գրականության ցանկ

1. Антон Хлопков, “Иранская ядерная программа в российско-американских отношениях”, “Научные записки # 18”, ПИР-ЦЕНТР ПОЛИТИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ В РОССИИ, Москва, 2001. [www.pircenter.org](http://www.pircenter.org).
2. Betsy Perabo, “A Chronology of Iran’s Nuclear Program”, Monterey Institute of International Studies, 1995. [www.miis.edu](http://www.miis.edu).
3. Anthony H. Cordesman, “Iran and Nuclear Weapons”, Center For Strategic and International Studies, 2000. [www.csis.org](http://www.csis.org).
4. Mohhamad Reza Pehlavi, “Answer to History”, New York, 1980.
5. Иван Сафранчук, “Ядерные и ракетные программы Ирана и безопасность России: Рамки российско-иранского сотрудничества”, “Научные записки # 8”, ПИР-ЦЕНТР ПОЛИТИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ В РОССИИ, Москва, 1998. [www.pircenter.org](http://www.pircenter.org).
6. Mostafa Taqizadeh Ansari, “A Glance at History of Transfer of Atomic Energy to Iran”, “Iran” (Morning Daily), May 25, 1995, [www.netiran.com](http://www.netiran.com).
7. “Интервью “Атомпрессы” с замминистра Минатом РФ Евгением Решетниковым”, “Атомпресса”, 8 декабря, 1999.
8. “The Observer”, June 12, 1988.
9. Jane’s Intelligence Review, Special Report # 6, May 1995, p. 14.
10. “Nuclear Engineering International”.
11. Robert Shuey & Shirley A. Kan, “Chinese Nuclear and Missile Proliferation”, Congressional Research Service, October 4, 1994.
12. Testimony of Paul Leventhal on U.S.-China Nuclear Cooperation Agreement Presented to the Committee on International Relations U.S. House of Representatives, October 7, 1997, [www.nci.org/pl10797.htm](http://www.nci.org/pl10797.htm).
13. Andrew Koch, Jeanette Wolf, “Iran’s Nuclear Facilities: a Profile”, 1998, [cns.miis.edu/pubs/reports/pdfs/iranrpt.pdf](http://cns.miis.edu/pubs/reports/pdfs/iranrpt.pdf).

14. "The Moscow Times", September 30, 1995, "Russia-Iran Reactor Deal Still on Track". [www.themoscowtimes.com](http://www.themoscowtimes.com).
15. "The Washington Times", April 18, 1996, p. A-7. [www.washtimes.com](http://www.washtimes.com).
16. "Независимая газета", 19 октября, 2000, Дмитрий Горностеав, Игорь Коротченко, "Сделка Гор-Черномырдин: ущерб России четыре миллиарда?". [www.ng.ru](http://www.ng.ru).
17. "The New York Times", "Russia, Iran May Sign Nuke Deal", August 27, 2003. [www.nytimes.com](http://www.nytimes.com).
18. "Москва и Тегеран обсуждают строительство АЭС в Бушере", 16 сентября, 2003, [www.vesti.ru](http://www.vesti.ru).
19. "The New York Times", "New Report Cites Traces of Uranium at Iran Plant", August 27, 2003. [www.nytimes.com](http://www.nytimes.com).
20. "The New York Times", "Russia Won't End Accord With Iran to Build Reactor", September 28, 2003. [www.nytimes.com](http://www.nytimes.com).
21. BBC, "Джон Болтон: Совбез должен вразумить аятолл", 5 октября, 2003. [www.bbcussian.com](http://www.bbcussian.com).
22. "Reuters", "U.S. Presses Russia to Halt Nuclear Aid to Iran", August 26, 2003. [www.reuters.com](http://www.reuters.com).
23. "Резолюция Совета управляющих МАГАТЭ не освобождает Россию от обязательств по строительству Бушерской АЭС", 1 октября, 2003. [www.iran.ru](http://www.iran.ru).
24. "Энергопуск АЭС в Бушере произойдет в середине 2006 года", 31 октября, 2003. [www.iran.ru](http://www.iran.ru).
25. BBC, "Россия отложит запуск АЭС в Иране?", 13 октября, 2003. [www.bbcussian.com](http://www.bbcussian.com).
26. "Минатом РФ: пуск первого энергоблока на иранской АЭС в Бушере может быть отложен на год", 13 октября, 2003, [www.iran.ru](http://www.iran.ru).
27. "Россия и США: танцы вокруг Бушера", 4 сентября, 2002, [www.stratcom.kz](http://www.stratcom.kz).
28. CNN, "Iran Nukes Still a Concern-IAEA", August 26, 2003. [www.cnn.com](http://www.cnn.com)
29. BBC, "МАГАТЭ требует от Ирана открытости", 8 сентября, 2003. [www.bbcussian.com](http://www.bbcussian.com).
30. "Если Иран будет лишен своих прав, он станет проводить новую политику", 8 октября, 2003. [www.iran.ru](http://www.iran.ru).
31. BBC, "Иран продолжает обогащать уран", 26 октября, 2003. [www.bbcussian.com](http://www.bbcussian.com).
32. BBC, "Иран может поссориться с МАГАТЭ", 10 сентября, 2003. [www.bbcussian.com](http://www.bbcussian.com).
33. "ЮАР предложила МАГАТЭ компромисный вариант резолюции по иранским ядерным программам", 11 сентября, 2003. [www.iran.ru](http://www.iran.ru).
34. CNN, September 12, 2003. [www.cnn.com](http://www.cnn.com).
35. "Глава МАГАТЭ отправляется в Иран", 13 октября, 2003 [www.iran.ru](http://www.iran.ru).

36. BBC, "Иран обещает ответить на ядерные вопросы", 16 октября, 2003. [www.bbcussian.com](http://www.bbcussian.com).
37. BBC, "Иран начал переговоры с МАГАТЭ", 18 октября, 2003. [www.bbcussian.com](http://www.bbcussian.com).
38. BBC, "Иран обещает сотрудничать с МАГАТЭ", 20 октября, 2003. [www.bbcussian.com](http://www.bbcussian.com).
39. BBC, ""Ядерный" визит евротройки в Иран", 21 октября, 2003. [www.bbcussian.com](http://www.bbcussian.com).
40. BBC, "Иран готов выполнить все требования МАГАТЭ", 21 октября, 2003. [www.bbcussian.com](http://www.bbcussian.com).
41. BBC, "Иран выполнит требования МАГАТЭ - на своих условиях", 21 октября, 2003. [www.bbcussian.com](http://www.bbcussian.com).
42. "Иран предоставил МАГАТЭ ядерную декларацию", 23 октября, 2003. [www.iran.ru](http://www.iran.ru).
43. "Иран отправил доклад о своей ядерной программе в ООН", 24 Октября, 2003. [www.iran.ru](http://www.iran.ru).
44. "The Financial Times", October 31, 2003, "UN Nuclear Chief Sees Progress In Iran". [www.ft.com](http://www.ft.com).
45. "Иран и США: дружба на фоне вражды", 8 октября, 2003. [www.iran.ru](http://www.iran.ru).
46. "Камаль Харрази прибыл в Испанию", 23 октября, 2003. [www.iran.ru](http://www.iran.ru).
47. BBC, "США: диалог с Ираном возможен, но ограниченный", 29 октября, 2003. [www.bbcussian.com](http://www.bbcussian.com).
48. "Тегеран и Багдад решают вопросы беженцев", 20 октября, 2003. [www.iran.ru](http://www.iran.ru).
49. Гагик Тер-Арутюнянц, "США-Иран: точка информационного невозврата?", "Голос Армении", 29 августа, 2003. [www.golos.arminco.com](http://www.golos.arminco.com).
50. 2003, Владимир Дунаев, "Превентивный удар по Бушеру: израильтяне не допустят, чтобы у Ирана появилась атомная бомба". "Известия", 12 октября, [www.izvestia.ru](http://www.izvestia.ru).
51. "Посол Ирана опроверг заявления Тель-Авива о нахождении израильского пилота Рона Арада в Тегеране", 11 октября, 2003. [www.iran.ru](http://www.iran.ru).
52. "The Washington Post", May 17, 1995, p. A-23. [www.washingtonpost.com](http://www.washingtonpost.com).
53. "Associated Press", May 5, 1997, 01:26. [www.ap.org](http://www.ap.org).

### Հապավումների ցանկ

ԱԷԿ - Ատոմային էլեկտրական կայան

ԱԷՍԳ - Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն

ԱՄՆ - Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԳՖՀ - Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն



ԵՄ - Եվրոպական Միություն  
ԶՈԶ - Չանգվածային ոչնչացման զենք  
ԻԱԷԿ - Իրանի ատոմային էներգիայի կազմակերպություն  
ԻԻՀ - Իրանի Իսլամական Հանրապետություն  
ԽՍՀՄ - Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն  
ՀԷԿ - Հիդրավիլիկական էլեկտրական կայան  
ՀԱՀ - Հարավաֆրիկյան Հանրապետություն  
ՀՀ – Հայաստանի Հանրապետություն  
ՄՍԱ - Մեծ Մերձավոր Արևելք  
ՌԴ - Ռուսաստանի Դաշնություն

*Դեկտեմբերի 17, 2003 թ.*

## ЯДЕРНАЯ ПРОГРАММА ИРАНА: ПРОШЛОЕ И НАСТОЯЩЕЕ

Саркис Арутюнян

Резюме

В статье обсуждается история и современное состояние ядерной программы Исламской Республики Иран.

Парадоксально, но в основе иранского ядерного проекта стоят США, которые в 1967 году в рамках собственной программы “Мирный атом”, поставили “Амирабадскому центру ядерных исследований” (Тегеран) реактор мощностью 5 МВт. До Исламской революции 1979 года, именно США и его союзники по НАТО выступали как основные партнеры Ирана в области ядерных исследований и различных проектов.

Ирано-иракская война (1980-88) и геостратегические планы нового руководство Ирана заставили Тегеран переосмыслить свою политику в ядерной области. Главными партнерами Ирана в сфере ядерного сотрудничества стали Китай и Россия. В частности Россия выступает как основной (а в некоторых случаях и единственный) партнер и поставщик ядерных материалов и технологий. Очевидно, что для Москвы сотрудничество с Тегераном имеет как экономическое, так и геополитическое значение.

В контексте геополитических процессов ядерная программа Ирана используется как средство давления на Тегеран. Между тем, ситуация вокруг Ирана крайне важна для Армении, т. к. эволюция в направлении кризиса может взорвать весь геополитический ландшафт региона.